# ԵՎՐՈՊԱԿԱՆ  ՀԱՄԱԼՍԱՐԱՆ/EUROPEAN UNIVERSITY

EUA
EUROPEAN
UNIVERSITY
OF ARMENIA

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ/ MEETING OF BOARD OF TRUSTEES

## 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ/OCTOBER 2020

Երևան/ Yerevan 2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան/ Introduction ........................................................................................................ 3

Նպատակ 1. Մասնագիտական կրթական ծրագրերի արդիականացում և բարելավում/ Goal 1. Modernization and improvement of professional education programs ............................................... 5

Նպատակ 2. Կառավարման և վարչարարության արդյունավետության բարձրացում/ Goal 2. Increasing the efficiency of management and administration ........................................................................ 64

Նպատակ 3. Արտաքին կապերի և միջազգայնացման ընդլայնում / Goal 3. Expansion of international relations and internationalization.................................................................................................. 85

Նպատակ 4. Որակի ապահովման համակարգի բարելավում/ Goal 4. Improvement of the quality assurance system.................................................................................................................... 118

Նպատակ 5. Մասնաճյուղերի զարգացում / Goal 5. Branch Development...................................... 128

Հավելված/Appendix ...................................................................................................................... 138

# ԱՌԱՋԱԲԱՆ

Հարգելի՛ շահառուներ,

Հաշվետու տարին լի էր փորձություններով՝ պայմանավորված Կորոնավիրուսային հիվանդությամբ և Արցախյան 44-օրյա պատերազմով: Այդ դժվարին օրերի հետ համընկավ նաև Եվրոպական համալսարանի վերահավատարմագրմանգործընթացը, որն անխափան իրականացվեց բուհի և ՈԱԱԿ-ի հմուտ մասնագետների ու աշխատակազմի արդյունավետ փոխգործակցության շնորհիվ: Արդյունքում Եվրոպական համալսարանին շնորհվեց 4 տարի ժամկետով ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Սույն հաշվետվությունն ընդգրկում է Եվրոպական համալսարանի 2020-2021 ուսումնական տարվա կրթական, գիտական, կառավարման և վարչարարության, կրթության որակի ներքին ապահովման, արտաքին կապերի և միջազգայնացման, ինչպես նաև մասնաճյուղերի զարգացման վերաբերյալ հիմնական արդյունքները, որոնք ներկայացված են ըստ ԵՀ 2018-2022թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գերակա նպատակների:

Ընդհանուր առմամբ Եվրոպական համալսարանը նախորդ տարվա համեմատ բարելավել է կրթության որակը, ռեսուրսներն ու ենթակառուցվածքները, ինչի արդյունքում հաշվետու տարում աճել է ընդունելության թիվը:

Նույնիսկ Կորոնավիրուսային հիվանդության պայմաններում արտաքին կապերին և միջազգայնացմանը

# INTRODUCTION

Dear stakeholders,

The reporting year was full of trials because of COVID-19 and the 44-day Artsakh war. Those difficult days coincided with the re-accreditation process of the European University, which was carried out smoothly due to the effective cooperation between university's and the ANQA's skilled specialists and staff. As a result, the European University was awarded a four-year institutional accreditation.

This report includes the main results of the European University in the fields of education, science, management and administration, internal quality of education, external relations and internationalization, as well as the development of branches in 2020-2021 academic year. The results are presented according to the priority goals of EU 2018-2022 strategic development plan.

In general, the European University has improved the quality of education, resources and infrastructure compared to the previous year, as a result of which the admission rate has increased in the reporting year.

Even in the context of COVID-19, EU students have participated in a number of international trainings and mobility programs to promote external relations and internationalization.

Capital constructions, property upgrades and resource replenishment were also carried out in the EU branches.

Summing up the results of this report, it may be noted that the

նպաստելու նպատակով ԵՀ ուսանողները մասնակցել են մի շարք միջազգային վերապատրաստումների և շարժունության ծրագրերի:

ԵՀ մասնաճյուղերում նույնպես իրականացվել են կապիտալ շինարարություններ, գույքի թարմացում, ռեսուրսների համալրում:

Ամփոփելով սույն հաշվետվության արդյունքները՝ կարելի է նշել, որ Եվրոպական համալսարանը կատարել է հաշվետու տարում ռազմավարական ծրագրով առաջադրված հիմնական խնդիրները՝ աստիճանաբար դառնալով ՀՀ-ում բարձր վարկանիշ ունեցող և մրցունակ բուհերից մեկը:

Ռեկտոր
մ.գ.թ. Հ. Բիշարյան

European University has fulfilled the main tasks set by the strategic plan for the reporting year, gradually becoming one of the highly ranked, competitive universities in Armenia.

Rector,
PhD in Pedagogy
H. Bisharyan

## ՆՊԱՏԱԿ 1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Եվրոպական համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական ու գիտատեխնիկական գործունեությունը պլանավորում, համակարգում և կարգավորում է ԵՀ գիտական խորհուրդը ռեկտորի նախագահությամբ:

ԵՀ Գիտական խորհրդի 25%-ը ԵՀ ուսանողներն են, 25%-ը ի պաշտոնե անդամները, 50%-ը ընտրովի անդամներ:

ԵՀ Գիտական խորհրդի 77%-ը ունեն գիտական կոչում, որոնց 39%-ը գիտության դոկտորներն են:

2020-2021 ուսումնական արվա ընթացքում հրավիրվել է թվով 9 գիտական խորհրդի նիստ, որոնց ընթացքում.

➢ հաստատվել է թվով 10 ասպիրանտների և հայցորդների գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեմաներ և գիտական ղեկավարներ,

➢ ԵՀ գիտական խորհրդի կողմից տպագրության են երաշխավորվել.

- «Եվրոպական համալսարանի» գիտական հոդվածների ժողովածուներ՝ 11/02/ և 12/01/,
- ԵՀ Իրավագիտության ամբիոնի դասախոս Վահե Թորոսյանի «Իրավաքաղաքական մտքի պատմություն» ուսումնամեթոդական ձեռնարկը,
- ԵՀ ռեկտոր Հեղինե Բիշարյանի «Արդյունահեն ուսումնառություն» ուսումնամեթոդական ձեռնարկը,

## GOAL 1. MODERNIZATION AND IMPROVEMENT OF PROFESSIONAL EDUCATION PROGRAMS

The teaching-methodological, research and scientific-technical activities of the European University are planned, coordinated and regulated by the EU Scientific Council chaired by the Rector.

25% of the EU Scientific Council are EU students, 25% are ex-officio members, 50% are elective members.

77% of the EU Scientific Council has a scientific degree, 39% of which are Doctors of Science.

9 sessions of the Scientific Council were convened in 2020-2021 academic year, during which:

➢ 10 postgraduate themes for acquiring the degree of Candidate of Science and their Scientific supervisors were approved,

➢ The following documents have been recommended for publication by the EU Scientific Council:

- “ European University” collections of scientific articles: 11/02/ and 12/01/;
- A methodological manual entitled “History of Legal and Political Thought” by Vahe Torosyan, a lecturer at the Chair of Law;
- A methodological manual entitled “Outcome-based learning” by EU rector Heghine Bisharyan;

➢ The project entitled “Problems of financing the agro-

➢ Հաստատվել և ՀՀ գիտության կոմիտե է ներկայացվել «Ագրոարդյունաբերական համալիրի ֆինանսավորման հիմնախնդիրները և լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայով նախագիծը (համակարգող/պատասխանատու Արամ Մխիթարյան):

Բուհի բնականոն գործունեությունը կազմակերպվում է 105 վարչական, որի 35%-ը՝ մարզերում, և 249 պրոֆեսորադասախոսական աշխատակիցների միջոցով, որի 34%-ը մարզերում:

2020-2021 ուստարում ԵՀ պրոֆեսորադասախոսական կազմը ըստ գիտական աստիճանի ու կոչման ներկայացված է գծապատկերում (տե՛ս գծապատկեր 1):

industrial complex and ways of its solution in the RA" has been approved and submitted to the Science Committee of the RA (Aram Mkhitaryan - the coordinator of the project).

The normal activity of the university is organized by 105 administrative staff, 35% of which are in the regions; and by 249 academic staff, 34% of which are in the regions.

In 2020-2021 academic year the EU academic staff with academic degrees and titles are represented in the chart (see Chart 1):




**Գծապատկեր/Chart 1. ԵՀ պրոֆեսորադասախոսական կազմը՝ ըստ գիտական աստիճանի և կոչման 2017-2021թթ./ EU academic staff with academic degrees**

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ԵՀ ուսանողների թիվը 2020-2021 ուստարում կազմել է 1746, որոնցից՝

- առկա ուսուցման բակալավրիատում՝ 844 ուսանող,
- հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 766 ուսանող,
- առկա ուսուցում մագիստրատուրայում՝ 86 ուսանող,
- հեռակա ուսուցում մագիստրատուրայում՝ 50 ուսանող:

Բուհի ուսանողների թվի 36%-ը Կապանի, Իջևանի, Գյումրու և Վանաձորի մասնաճյուղերի ուսանողներ են:

ԵՀ ուսանողների ընդհանուր թվի շուրջ 8,5%-ը հանդիսանում են այլ երկրների քաղաքացիներ: Այդ թվում՝

- Առկա բակալավրիատ՝ 142 ուսանող,
- Հեռակա բակալավրիատ՝ 1 ուսանող,
- Առկա մագիստրատուրա՝ 6 ուսանող:

Եվրոպական համալսարանում գործում է նախապատրաստական բաժին, որը 2020-2021 ուստարում ունեցել է 272 սովորողներ, որոնց շուրջ 60%-ը օտարերկրացիներ են:

2020-2021 ուստարվա ընթացքում անբավարար առաջադիմության, բացակայությունների և այլ պատճառներով ԵՀ-ից հեռացվել կամ ազատվել են 155 ուսանող, որից՝

- առկա բակալավրիատ՝ 43 ուսանող,
- հեռակա բակալավրիատ՝ 90 ուսանող,
- առկա մագիստրատուրա՝ 16 ուսանող,
- հեռակա մագիստրատուրա՝ 6 ուսանող:

## STUDENTS

The number of EU students is 1746 as of 2020-2021 academic year:

- Full-time Bachelor’s Degree: 844 students,
- Part-time Bachelor’s Degree: 766 students,
- Full-time Master’s degree: 86 students,
- Part-time Master’s Degree: 50 students.

36% of the university students are students from Kapan, Ijevan, Gyumri and Vanadzor branches.

About 8,5% of the total number of EU students are citizens of other countries, including:

- Full-time Bachelor’s Degree: 123 students,
- Part-time Bachelor’s Degree: 1 student,
- Full-time Master’s degree: 11 students:

There is a preparatory division at the European University, which in 2020-2021 academic year had 272 students, about 60% of whom are foreigners.

During 2020-2021 academic year, 155 students have been dismissed or expelled from EU due to insufficient progress, absences and other reasons:

- Full-time Bachelor’s Degree: 43 students,
- Part-time Bachelor’s Degree: 90 students,
- Full-time Master’s degree: 16 students,
- Part-time Master’s degree: 6 students,

59 students were re-enrolled or transferred from other universities:

- Full-time Bachelor’s Degree: 29 students,

Վերականգնվել կամ այլ բուհերից տեղափոխվել են 59 ուսանող, որից

- առկա բակալավրիատ՝ 29 ուսանող,
- հեռակա բակալավրիատ՝ 30 ուսանող:

Մասնագիտության կրթական ծրագրերի իրականացումն ապահովելու նպատակով ԵՀ գրադարանը շարունակական համալրվում է: Հաշվետու տարվա ընացքում ձեռք է բերվել 102 մասնագիտական գիրք, որի 35%-ը իրավագիության, 22%-ը Միջազգային հարաբերությունների, 16%-ը Զբոսաշրջության, 14%-ը Հոգեբանության, 10% Լեզվաբանության, 5% տնտեսագիտական մասնագիտություն-ներով, ինչպես նաև 400 էլեկտրոնային գրքեր:

2020-2021 ուսումնական տարվա ընթացքում ԵՀ գրադարանից օգտվել են 624 ուսանող, որից 35,5% կառավարում և ֆինանսներ մասնագիտություններից, 36%-ը իրավագիտությունից, 9%-ը Սերվիսից, 6%-ը Միջազգային հարաբերություններից, 3-ական% Հոգեբանությունից, Լեզվաբանությունից և Տեղեկատվական տեխնոլոգիաներից, 1,3% Ճարտարապետությունից և դիզայնից:

Հատկանշական է, որ գրադարանից օգտվող ուսանողների մեծամասնությունը (35,5%) Կառավարում և Ֆինսնաներ մասնագիտությունից են, սակայն գրականոթւյան ձեռք բերման հարցում տնտեսագիտական գրականությունը ամենաքիչ ձեռքբերված գրականություններից մեկն է (5%):

- Part-time Bachelor’s Degree: 30 students.

The EU library is constantly being replenished to ensure the implementation of professional education programs. During the reporting year, 102 professional books were acquired, 35% of which were in law, 22% in international relations, 16% in tourism, 14% in psychology, 10% in linguistics, 5% in economics, as well as 400 e-books.

During 2020-2021 academic year, 624 students used the EU library, 35.5% of which is from Management and Finance specialties, 36% is from Law, 9% is from Service, 6% is from International Relations, 3% each is from Psychology, Linguistics and Information technology, 1.3% is from Architecture and design.

It is remarkable that the majority of students using the library (35.5% ) are from the field of Management and Finance, but literature in Economics is one of the least acquired one (5%).

Եվրոպական համալսարանի ուսանողները բացի կրթական գործունեությունից ԵՀ ուսանողական խորհրդի գլխավորությամբ ակտիվորեն մասնակցում են երկրում հասարակական, կրթական, մշակութային և այլ բնույթի ուսումնադաստիարակչական միջոցառումների:

In addition to the educational activities, European University students headed by the EU Student Council, actively participate in social, educational, cultural and other educational activities in the country.



2020թ. սեպտեմբերին Եվրոպական համալսարանի ուսանողները մեծ ոգևորությամբ մասնակցեցին «Արի պարի քոչարի» համահայկական նախագծին:

In September 2020 the European University students participated in "Let's dance Kochari" pan-armenian project.



## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԱՂԱՆԴՆԵՐԸ

Ս.Թ. Մայիսի 5-ին Եվրոպական համալսարանում կայացավ ԵՀ ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված «Եվրոպական համալսարանի տաղանդները» միջոցառումը, որի ընթացքում իրենց ստեղծագործությունները ներկայացրեցին ԵՀ նախապատրաստական բաժնի ուսանող-ները, բակալավրի և մագիստրատուրայի ուսաողնենրը, ինչպես նաև ԵՀ աշխատակիցները: Միջոցառումը բացվեց գեղեցիկ ստվերային ներկայացմամբ, ապա ներկաները ծանոթացան մասնակիցների աշխատանքներին՝ նկարներ, կոմպոզիցիաներ, ձեռագործ աշխատանքներ, հանդես եկան իրենց հեղինակային երգերով, ազգային, ժամանակակից և այլ պարերով: Միջոցառմանը ելույթ ունեցավ նաև ԵՀ ուսանողներից կազմավորված «ԵՎՐՈ» բենդը՝ իր հիանալի կատարումներով:





## THE TALENTS OF THE EUROPEAN UNIVERSITY

The "Talents of the European University" event organized by the Student Council of the European University took place on 5 May at the European University, during which the students of the Preparatory Department of the European University, Bachelor and Master students, as well as the staff of the European University presented their works. The event was opened with a beautiful shadow performance, and then the participants got acquainted with the works of the participants - paintings, compositions, handicrafts, performed their own songs, national, modern and other dances. The "EURO" band consisting of EU students also made an excellent performance at the event.

## ՀՀ ՊՆ Վ.ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ԱՅՑԸ ԵՀ

Սույն թվականի մայիսի 14-ին ճանաչողական այցի շրջանակում, Եվրոպական համալսարանը հյուրընկալեց ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի կուրսանտներին:
Կուրսանտները ԵՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Գ.Մանասյանի և ԵՀ ՈՒԽ-ի անդամների հետ շրջեցին համալսարանում, ծանոթացան համալսարանում առկա բաժին-ներին, առաջարկվող մասնագիտություններին, արտասահ-մանում սովորելու հնարավորություններին, գրադարանին, ընթերցասրահին, բուհի առանձնահատկություններին և առավելություններին:
Կառավարման ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի՝ Տաթևիկ Բաղդասարյանը, ով փոխանակման ծրագրի շրջանակներում մեկ կիսամյակ սովորել էր Ավստրայի “FH Kufsetin Tirol” կիրառական գիտությունների համալսարանում, մանրամասն ներկայացրեց կուրսանտներին ծրագրի, արտասահմանյան կրթության և ուսանողական կյանքի մասին, ինչպես նաև պատասխանեց իրենց հուզող հարցերին: Հանդիպման շրջանակներում նաև քննարկվեցին ԵՀ Ուսանողական խորհրդի և ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի կուրսանտական խորհրդի միջև հետագա համագործակցության հնարավորությունները: Եվրոպական Համալսարանը իր խորհին երախտագիտությունը հայտնեց ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարանի կուրսանտներին շարունակական փոխահամգործակցության համար և պարգևատրեց շնորհակալագրով:



## THE VISIT OF THE CADETS OF THE MILITARY UNIVERSITY AFTER V. SARGSYAN OF THE RA MINISTRY OF DEFENSE TO THE EUROPEAN UNIVERSITY

On May 14, 2021 within the framework of the study visit, the European University hosted the cadets of the Military University after V. Sargsyan of the RA Ministry of Defense. The cadets toured the university with the EU Vice-Rector for Education G. Manasyan and the members of the EU Student Council, got acquainted with the departments, the offered specialities, opportunities to study abroad, the library, the reading hall, the peculiarities and advantages of the university. Tatevik Baghdasaryan, a fourth-year student at the Faculty of Management, who has studied at the FH Kufsetin Tirol University of Applied Sciences in Austria for one semester, introduced the program, foreign education and student life, and also answered the questions. Within the framework of the meeting, the sides also discussed the possibilities of further cooperation between the Student Council of the European University and the Cadet Council of the V. Sargsyan Military University of the RA Ministry of Defense. The European University expressed its deep gratitude to the cadets of the V. Sargsyan Military University for their constant cooperation and awarded them with a certificate.




## ԵՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԿԱՑԵՑԻՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

Ս.Թ. մայիսի 15-ին տեղի ունեցավ «Հայ ուսանողությունը՝ ազգային վերածննդի առաջամարտիկ» խորագրով համահայկական ուսանողական առցանց խորհրդաժողով, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության և աշխարհի 25 պետությունների հայ ուսանողության ներկայացուցիչներ:

Խորհրդաժողովին մասնակցեցին նաև Եվրոպական համալսարանի Իրավագիտության և Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Միջազգային հարաբերություններ մասնագիտության 1-ին կուրսի ուսանողներ՝ Թերեզա Մնացականյանը՝ «Հայապահպանության հիմնախնդիրները Եվրոպայում (Հունաստանի հայ համայնքի օրինակով)» թեմայով և Մարիետա Դոլունցը՝ «Կրթական հիմնախնդիրները Կոստանդնուպոլսի հայ համայնքում» թեմայով զեկուցումներով:

## STUDENTS OF LAW AND INTERNATIONAL RELATIONS OF THE EUROPEAN UNIVERSITY PARTICIPATED IN THE PAN-ARMENIAN ONLINE CONFERENCE

A pan-Armenian online student conference entitled "Armenian Students: Leaders of the National Revival" was held on May 15, 2021. It was attended by Armenian student-representatives from the Republic of Armenia, the Republic of Artsakh and 25 countries of the world.

The conference was also attended by first-year students majoring in International Relations at the Faculty of Law and International Relations of the European University. Teresa Mnatsakanyan made a report on "Issues of Preservation of the Armenian Identity in Europe (following the example of the Armenian community in Greece)" and Marietta Dolunts made a report on "Issues of Education in the Armenian Community of Constantinople".

*Եվրոպական համալսարանի ուսանողական խորհուրդը, ուսանողները և աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ունեցել նաև պատերազմական օրերին:*

*Կիրառական լեզվաբանության ամբիոնի վարիչը, դասախոսների, ուսանողները հետ միասին ձևավորեցին աշխատանքային խումբ, որը ԵՀ կոմունիկացիաների դեպարտամենտի հետ համատեղ պատրաստում էին տեսանյութեր և տեղեկատվական նյութեր համացանցում տարածելու նպատակով:*

*The European University Student Council, students and staff made an active participation in the days of the war.*

*The Head of the Chair of Applied Linguistics, together with the lecturers and students, formed a working group, which together with the EU Department of Communications, prepared videos and information materials to be spread on the Internet.*



29.09.2020-ին Եվրոպական համալսարանի ռեկտոր Հեղինե Բիշարյանի նախաձեռնությամբ և Ուսանողական Խորհրդի մեծ աշխատանքի շնորհիվ փորձեցինք մեր փոքր աջակցությունը ցուցաբերել մեր զինվորներին:

On 29.09.2020 on Rector's initiative of the European University Armenia, Heghine Bisharyan, and due to the hard work of the Student Council, we tried to provide our small support to our soldiers by sending first necessity items, food and medicine to the front line.



Եվրոպական համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Լիոնի առևտրաարդյունաբերական պալատի Էկլիա Բիզնես դպրոցի և Հիբրիա Բիզնեսի և տեխնոլոգիաների ինստիտուտի ղեկավար ՍԵԲԱՍՏԻԱՆ ԱՐԿՈՍԸ և Իտալիայի Հանրապետության Բոլզանոյի «Եվրակ» հետազոտական կենտրոնի Գլխավոր տնօրեն ՍՏԵՖԱՆ ՕՐԹՆԵՐԸ պատերազմի օրերին իրենց աջակցությունն էին ցուցաբերում Հայաստանին և Արցախին:



Members of the Board of Trustees of the European University, Sebastian Arcos, Director of the “EKLYA” Business School and the “HYBRIA” Institute of Business and Technology, and Stefan Orten, Director of the “Eurac” Research Center in Bolzano, Italy, supported Armenia and Artsakh during the war.

## ՊԱՏԵՐԱԶՄ ԱՐՑԱԽՈՒՄ



Հանդիսանալով EURASHE-ի միակ և լիիրավ անդամը Հայաստանից, ԵՀ-ը տեղեկատվական հաղորդագրություններ ուղարկեց EURASHE-ի բոլոր լիիրավ անդամներին, հաստատություններին և կառույցներին, ինչպես նաև ԵՀ-ի արտերկրյա գործընկերներին:

Հուսանք իրական պատկերն իմանալով՝ կկարողանան իրենց երկրում հասարակության մեջ լիարժեք ներկայացնել իրավիճակը:

Եթե պետությունների մեծ մասը տիրապետի իրականությանը, հուսանք, որ հնարավոր կլինի շուտ կանգնեցնել այս արյունախում և անարդար պատերազմը:

## ARTSAKH IN WAR

Being the only and full member of EURASHE from Armenia, the EUA sent the informational email to all the full members of EURASHE institutions and structures, as well as to the foreign partners of the EUA.

We do hope that knowing the real picture, they will be able to fully present the situation to the society of their country.

If most countries learn the truth, let's hope that it will be possible to stop this bloody, unfair war very soon.

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ



Եվրոպական համալսարանի անձնակազմը հանդիպում էր կազմակերպել Արցախյան պատերազմից վերադարձած Եվրոպական համալսարանի ուսանողների հետ: Հանդիպման ընթացքում ԵՀ Հոգեբանության ամբիոնի վարիչ Կարինե Նալչաջյանը ներկայացրեց ռազմական հոգեբանության ասպեկտները և բուհի նախաձեռնությամբ այն ուսանողներին, ում հոգեբանական աջակցություն է անհրաժեշտ, առանձին հանդիպման հնարավորություն ընձեռվեց, իսկ ԵՀ ուսումնական մասը իր աջակցությունը հայտնեց բաց թողնված դասերի լրացման հետ կապված:

## MEETING WITH OUR RETURNED STUDENTS FROM THE ARTSAKH WAR



The staff of the European University organized a meeting with the students of the European University who returned from the Artsakh war. During the meeting, the head of the EU Department of Psychology Karine Nalchajyan presented aspects of military psychology, and at the initiative of the university, students in need of psychological support were given the opportunity to hold a separate meeting and the EU Department of Education expressed its support to replace the missing lessons.





## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ «ՄԵՐ ՀՈՂԻ ՎՐԱ ՄԵՐՆ ԵՆՔ ԼԻՆԵԼՈՒ» ԽՈՐԱԳՐՈՎ ՑԵՐԵԿՈՒՅԹ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մայիսի 7-ին Եվրոպական համալսարանում կայացավ ցերեկույթ նվիրված 44օր տևած Երկրորդ Արցախյան պատերազմում զոհված ԵՀ ուսանողների և շրջանավարտների հիշատակին: Ցերեկույթին մասնակցում էին մեր անմահ հերոսների ուսանողական ընկերները, դասախոսները և ընտանիքի անդամները: Մասնակիցները ծանոթացան հերոսներին նվիրված հուշատախտակին, տեղի ունեցավ հերոսների ոգեկոչման արարողություն, որին մասնակցեց նաև Արաբկիրի եկեղեցու խորհրդակատար՝ Տեր Բաբկեն քահանա Հայրապետյանը, ով աղոթքի միջոցով իր զորակցությունը հայտնեց զոհվածների ծնողներին և ներկաներին: Միջոցառումը ուղեկցվեց ԵՀ ուսանողների հուզիչ ելույթներով ու ռազմական երգերով: Ելույթներով հանդես եկան մեր հերոսների ուսանողական ընկերներն ու դասավանդողները, պատմեցին իրենց հուշերն ու հիշողությունները, ինչպես նաև իրենց խոնարհումը զոհված





## A MATINEE ENTITLED "WE WILL BE OURS ON OUR LAND" DE DICATED TO THE COMMEMORATION OF IMMORTAL HEROES WAS HELD AT THE EUA.

On May 7, 2021 a matinee dedicated to the commemoration of EU students and graduates killed in the Second Artsakh War took place at the European University. Student friends, lecturers and family members of our immortal heroes were the participants of the event. The participants got acquainted with the memorial plaque dedicated to the heroes, a commemoration ceremony was held, which was attended by Father Babken Hayrapetyan, the priest of Arabkir Church, who expressed his support to the parents of the victims and the presents through the prayer. The event was accompanied by exciting performances and military songs by EU students. The friends and lecturers of our heroes made speeches, shared their memories, as well as expressed their condolences to the parents and relatives of the fallen heroes.

The event ended with the words of EU Rector Heghine Bisharyan, who expressed her support to the parents and relatives, from now and on they have their chapel at the

հերոսների ծնողներին ու հարազատներին: Ցերեկույթը ավարտվեց ԵՀ ռեկտոր Հեղինե Բիշարյանի խոսքով, ով իր զորակցությունը հայտնեց ծնողներին ու հարազատներին, նշելով, որ այսուհետ իրենք իրենց մատուռն ունեն Եվրոպական համալսարանում, ուր միշտ կարող են այցելել: «Մենք հողն ենք դրել մեր լույսը և իրավունք չունենք թողնել ու հեռանալ, պարտավոր ենք մնալ, կրթվել, աշխատել, շենացնել, պահել ու պահպանել մեր հողն ու երկիրը»,- ռեկտոր՝ Հ. Բիշարյան:

European University, where they can always be visited. "We have burried our precious light, we have no right to leave, we are obliged to stay, be educated, work, improve, keep and preserve our land and country," said Rector H. Bisharyan.

## ԵՀ 2020Թ. ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

Եվրոպական համալսարանում, սահմանված ընթացակարգի համաձայն, ընտրվեցին 2020 թվականի բակալավրի և մագիստրատուրայի լավագույն ուսանողները.

Ընտրությունն իրականացվել է ելնելով երեք չափորոշիչներից՝ ուսման առաջադիմություն, կատարած գիտական և հետազոտական աշխատանքներ, հասարակական ակտիվություն:

Ըստ վերոնշյալ չափորոշիչների ֆակուլտետների կողմից ներկայացված թեկնածուներից ընտրվեցին՝

2020Թ. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ՝

* Բաղդասարյան Տաթևիկ Ալեքսանի
* Անդրիասյան Համլետ Արտաշեսի
* Իլյա Հականի

2020Թ. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ՝

* Ֆարսիյան Լիլիթ Մավրիկի:



## THE EU BEST STUDENTS 2020

The best Bachelor`s and Master`s students of 2020 were selected according to the procedure defined at the European University.

The selection was made based on three criteria: Learning grades, Scientific and research works, Social activity.

According to the above criteria, the following students were selected from the candidates nominated by the faculties:

THE BEST BACHELOR`S STUDENT 2020:

* Baghdasaryan Tatevik
* Andriasyan Hamlet
* Ilya Hakani

THE BEST MASTER'S STUDENT 2020:

* Farsiyan Lilit.

*Ուսանողների մասնագիտական կարողությունների բարձրացման նպատակով Եվրոպական համալսարանում պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստումներ և վարպետաց դասեր ոլորտի պրակտիկ ներկայացուցիչների հետ, ովքեր իրենց փորձն ու գիտելիքներն են փոխանցում ուսանողներին։*

*In order to increase students' professional capacities, the European University regularly organizes trainings and master classes with practical representatives of the field, who share their experience and knowledge with students.*

## ԶՈՐԱՆ ՍՏԱՄԵՆԿՈՎԻՉԻ «ԱՆԼԱՐ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻԿՐՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՌՑԱՆՑ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 12-ին Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆ. Վազգեն Մելիքյանի նախաձեռնությամբ անցկացվեց առցանց դասախոսություն, որը վարեց Ֆրանկֆուրտի IHP GmbH ընկերության առաջատար գիտաշխատող, 120-ից ավել գիտական աշխատությունների հեղինակ, մի շարք միջազգային հեղինակավոր գիտական հանդեսների կոլեգիալ մարմնի անդամ Զորան Ստամենկովիչը։ Հանդիպմանը մասնակցեցին Եվրոպական համալսարանի Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր ամբիոնի դասախոսներն ու ուսանողները։

Մասնակիցների կողմից դասախոսությունը գնահատվեց որպես արդյունավետ փորձ՝ մասնագիտական անգլերեն լեզվով ինտեգրալ սխեմաների և համակարգերի նախագծման և թեստավորման ոլորտում նոր գիտելիքներ ձեռք բերելու տեսանկյունից։





## ONLINE LECTURE BY ZORAN STAMENKOVIC ON "DESIGNING MICROELECTRONIC CIRCUITS IN THE FIELD OF WIRELESS COMMUNICATION."

On November 12, Head of the Department of Microelectronic Circuits and Systems, Doctor of Technical Sciences, Prof. Vazgen Melikyan initiated an online lecture conducted by Zoran Stamenkovich, who is a leading researcher at IHP GmbH Frankfurt, the author of more than 120 scientific papers, and a member of the collegial body of a number of prestigious international scientific journals. The lecturers and students of the Department of Microelectronic Circuits and Systems of the European University took part in the meeting.

The lecture was assessed by the participants as an effective experience of gaining new knowledge in the field of design and testing of integrated circuits and systems in professional English.





### «ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՀ-ՈՒՄ

2021 թ. փետրվարի 24-ին Եվրոպական համալսարանում տեղի ունեցավ «Երկրաշարժը և վարքագծի կանոն-ները» թեմայով դասախոսություն - ուսուցում:

Դասընթացը վարում էր ԵՀ Քաղացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հանձնա-ժողովի շտաբի պետք, ավագ լեյտենանտ Անահիտ Դալլաքյանը:

Հայաստանը, գտնվելով սեյսմիկ գոտում, և հաշվի առնելով վերջին շրջանում ակտիվացած ու հաճախակի դարձած ցնցումները՝ ԵՀ վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար կազմակերպված դասնթացի ընթացքում քննարկեցին երկրաշարժերի ծագումնաբանությանը, երկրաշարժերի դեպքում պաշպանության ու վարքագծի կանոնները:

### A LECTURE ON "EARTHQUAKE - RULES OF CONDUCT" IN EUA

A lecture on "Earthquake - Rules of Conduct" was held at the European University on February 24, 2021. The training was conducted by Anahit Dallakyan, Senior Lieutenant, Chief of the EU Committee on Civil Defense and Emergency Situations.

Armenia, being in a seismic zone, and taking into account the recent earthquakes that have become more active and frequent, the genealogy of earthquakes, the rules of protection and behavior in case of earthquakes were discussed during the course organized for EU administrative, academic staffs and for students.

Փետրվարի 19-ին Բրիտանական խորհուրդը մեկնարկեց Բրիտանական ֆիլմերի 17-րդ փառատոնի շրջանակներում վիրտուալ ցուցադրությունների իննօրյա ծրագիրը:

Եվրոպական համալսարանի Կիրառական լեզվաբանության ամբիոնի Լեզվաբանություն կրթական ծրագրով սովորող առաջին կուրսի ուսանողները դիտեցին "Lady Makbeth" ֆիլմը անգլերենով և ունեցան արդյունավետ քննարկում անգլերենով:



On February 19 British Council Armenia launched the 17th edition of the British Film Festival for nine days of virtual screenings.

EU freshman students watched the film " Lady Makbeth" and had a fruitful discussions in English.

## ԼԻԶԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՀ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ՎԻՆԿ խորհրդատվական ընկերության և Outreach Հանրային իրազեկման ՀԿ-ի նախաձեռնությամբ Լիզինգի օրենսդրական փաթեթի փոփոխությունների վերաբերյալ հանրային իրազեկման արշավի շրջանակներում կայացավ հանդիպում Եվրոպական համալսարանի ուսանողների հետ:

Հանդիպման հրավիրված էր փորձագետ «Ագրոլիզինգ» ԼՎԿ ՍՊԸ խորհրդի նախագահ, գործադիր տնօրեն Արամ Մխիթարյանը և Գործարարության Աջակցման Գրասենյակի հանրային կապերի պատասխանատու՝ Դիանա Հարությունյանը: Վերջիններս ներկայացրեցին մանրամասներ Լիզինգի օրենսդրական փաթեթի փոփոխություններից, Լիզինգի նոր հնարավորություններից և պատասխանեցին ներկաների թեմային վերաբերող տարբեր հարցերի:

Հաշվի առնելով հանդիպման բովանդակության և ֆորմատի արդյունավետությունը, ներկաների շրջանում մեծ հետաքրքրությունը թե՛ լիզինգի վերաբերյալ, թե՛ նախաձեռնության կազմակերպիչների և մասնակիցների, կողմերի միջև համաձայնություն ձեռք բերվեց հետագա ակտիվ համագործակցության վերաբերյալ:

## MEETING RAISING AWARENESS AMONG THE STUDENTS OF THE FACULTY OF ECONOMICS AND MANAGEMENT ON THE PECULIARITIES OF LEASING AND THE POSSIBILITIES OF APPLYING

At the initiative of VINK Consulting and Outreach Public Awareness NGO, a meeting with European University students was held as part of a public awareness campaign on changes to the Leasing package.

Expert Aram Mkhitaryan, Chairman of the Board, Executive Director of "Agrolizing" Leasing Credit LLC, and Diana Harutyunyan, Public Relations Officer of the Business Support Office, were invited to the meeting. They provided details on changes in the Leasing Legislation package, new Leasing opportunities and answered various questions related to the topic of attendance.

Taking into account the effectiveness of the content and format of the meeting, the great interest among those present, both in terms of leasing and the organizers and participants of the initiative, an agreement was reached between the parties on further active cooperation.



## ԱՐՏԱԳՆԱ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍԵՐՎԻՍ /ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ/



Եվրոպական համալսարանը համաձայն իր առաքելության իրականացնում է կրթական ծրագրեր, որոնք նպաստում են ոչ միայն գիտելիքների, այլ նաև գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը:

Այդ նպատակով Սերվիս մասնագիտության /մասնագիտացումը՝ զբոսաշրջություն/ ուսանողները «Հայաստանի թանգարաններ» դասընթացի շրջանակներում գործնական մասը իրականացնում են հայաստանյան պատմամշակութային օջախներում:

Դասընթացը ամփոփվեց մայիսի 22-ին կայացած այցելությունների շարքով, որը սկսվեց Սարդարապատի հուշահամալիրից: Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարանում ուսանողները դասախոս Մանե Խաչատրյանի ուղեկցությամբ շրջեցին ազգագրության և Մայիսյան հերոսամարտեր բաժիններում, ծանոթացան ազգագրության թանգարանի բոլոր բաժինների ցուցանմուշներին, նախորդ դարերի ազգային ծեսերին, առօրյա կենցաղային իրերին՝ տարազներին, զորգերին և այլն:

Նույն օրը ուսանողները եղել են Էջմիածնի Մայր տաճարի Գանձատուն Ալեք և Մարի Մանուկյաններ թանգարանում, ինչպես նաև «Զվարթնոց» արգելոց թանգարանում և մասնակցել այնտեղ կայանալիք «Տոլմայի փառատոնին»:

## OUTGOING PRACTICAL LESSONS. PROFESSION: SERVICE / TOURISM /

According to its mission, the European University implements educational programs that contribute not only to the acquisition of knowledge, but also to the acquisition of practical skills and abilities.

For this purpose, students of the specialty "Service" (specialization: tourism) conduct a practical part in the historical and cultural centers of Armenia as part of the course "Museums of Armenia".

The course ended with a series of visits on May 22, which began at the Sardarapat Memorial. Accompanied by lecturer Mane Khachatryan at the Sardarapat Memorial, the students toured the sections of ethnography and the May Heroic Battles, got acquainted with the exhibits of all sections of the Ethnography Museum, national rituals of previous centuries, everyday household items such as costumes, carpets , etc.

On the same day, the students visited the Alex and Marie Manookyan Museum of the Treasury of the Mother Cathedral of Etchmiadzin, as well as the Zvartnots Historical-Cultural Museum-Reserve and took part in the "Dolma Festival" held there.

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՆԱԽԱՁԵՌՆԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԵՀ-ՈՒՄ

Մայիսի 3-ին Եվրոպական համալսարանի Տեղեկատվական տեխնոլոգիաների ֆակուլտետի նախաձեռնությամբ կայացավ «Տեղեկատվական տեխնոլոգիաները Եվրոպական համալսարանում» խորագրով միջոցառում, որին մասնակցեցին ՏՏ ֆակուլտետի և նախապատրաստական բաժնի ուսանողները: Մասնակիցները ներկայացրեցին իրենց առաջին քայլերը տեղեկատվական տեխնոլոգիաներում, խոսեցին ծրագրավորումից, ռոբոտաշինությունից, առօրյա կյանքում ՏՏ-ի կարևորությունից, ներկայացրեցին խմբային պրոյեկտներ:

Միջոցառման բացման խոսքով հանդես եկավ ԵՀ-ի ՏՏ ֆակուլտետի դեկան՝ Հ. Ղումաշյանը, ով ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ նշեց, որ տեղեկատվական տեխնոլոգիաները ՀՀ տնտեսության ամենարագ զարգացող ճյուղերից է, ինչը պայմանավորված է իր՝ բավականին բարձր մրցակցային ներուժ ունեցող աշխատուժով:

Միջոցառման նպատակն էր համախմբել ՏՏ ոլորտի ուսանողներին, ներկայացնել նրանց գաղափարները:

Եվրոպական համալսարանի, մասնագիտության առանձնահատկություններից, առավելություններից, միջազգային համագործակցություններից խոսեցին Տեղեկատվական տեխնոլոգիաների և կիրառական մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Ս. Հարությունյանը և ԵՀ արտաքին կապերի և միջազգայնացման գծով պրոռեկտոր Վ. Սողոմոնյանը:



## AN EVENT INITIATED BY THE FACULTY OF INFORMATION TECHNOLOGIES AT THE EUROPEAN UNIVERSITY

On May 3, at the initiative of the Faculty of Information Technologies of the European University, an event entitled "Information Technologies at the European University" was held, in which students of the Faculty of Information Technologies and the Preparatory Department took part. The participants presented their first steps in information technology, talked about programming, robotics, the importance of IT in everyday life, and presented group projects.

The opening speech of the event was made by the Dean of the IT Faculty of the European University H. Ghumashyan. Welcoming the participants of the event, she noted that information technologies are one of the most dynamically developing sectors of the Armenian economy, which is due to a sufficiently high competitive potential.

The aim of the event was to unite IT students and present their ideas.

The Head of the Chair of Information Technologies and Applied Mathematics S. Harutyunyan and Vice-Rector for External Relations and Internationalization of the European University V. Soghomonyan spoke about the peculiarities, advantages, international cooperation of the European University.



## ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1-ԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 103-ԱՄՅԱԿԻՆ

2021թ. մայիսի 12-ին Եվրոպական համալսարանում հյուրընկալվեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող պ.գ.թ., դոցենտ Համո Սուքիասյանը, ով ԵՀ Իրավագիտության և միջազգային հարաբերություններ ֆակուլտետի ուսանողների համար անցկացրեց վարպետության դաս՝ նվիրված Հայաստանի 1-ին հանրապետության 103-ամյակին:

Իր ելույթում Հ. Սուքիասյանը ուսանողներին հանգամանալից ներկայացրեց 1918 թ. Անդրկովկասում տիրող քաղաքական դրությունը, ՀՀ իշխանության մարմինների ձևավորման գործընթացը, ինչպես նաև անդրադարձ կատարեց 1918-1920 թթ. տարբեր երկրներում ՀՀ դիվանագիտական առաքելությունների գործունեության լուսաբանմանը:

Ելույթից հետո տեղի ունեցավ քննարկում, մտքերի փոխանակում, հարց-պատասխան, որի ընթացքում բանախոսը պատասխանեց ներկաներին հուզող հարցերին:



## MASTER CLASS AT THE EUROPEAN UNIVERSITY DEDICATED TO THE 103RD ANNIVERSARY OF THE 1ST REPUBLIC OF ARMENIA

On May 12, 2021, the European University hosted Hamo Sukiasyan, a leading PhD researcher at the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia, who conducted a master class for students of the Faculty of Law and International Relations dedicated to the 103rd anniversary of the First Republic of Armenia.

In his speech, H. Sukiasyan presented to the students in detail the political situation in Transcaucasia in 1918, the process of formation of the RA authorities, as well as referred to the coverage of the activities of the RA diplomatic missions in different countries in 1918-1920.

After the speech, a discussion took place, an exchange of views, questions and answers, during which the speaker answered the questions of the audience.



## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2021 թվականի մայիսի 19-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի ուսանողներին։

Ողջունելով ուսանողներին՝ Արման Դիլանյանն անդրադարձել է Սահմանադրական դատարանի առաքելությանն ու գործունեությանը վերաբերող մի շարք առանձնահատկությունների։ Հանդիպումը շարունակվել է հարց ու պատասխանի ձևաչափով, որի շրջանակներում ՍԴ նախագահը պատասխանել է ուսանողների հարցերին։ Հանդիպման ավարտին Արման Դիլանյանն ուսանողներին հորդորել է մշտապես բարձր առաջադիմությամբ սովորել և ձեռք բերված գիտելիքները հետագայում ծառայեցնել Հայաստանի Հանրապետության հզորացմանն ու պետական զարգացմանը։

## VISIT OF THE EUROPEAN UNIVERSITY STUDENTS TO THE CONSTITUTIONAL COURT

On May 19, 2021, the President of the Constitutional Court Arman Dilanyan hosted the students of the Chair of Law of the European University.

Arman Dilanyan greeted the students and touched upon a number of peculiarities related to the mission and activity of the Constitutional Court. They continued the meeting with a question and answer format, within the framework of which the President of the Constitutional Court answered the students' questions. At the end of the meeting Arman Dilanyan urged the students to always study with high progress and use the acquired knowledge to further empowerment and state development of the Republic of Armenia.



## ՊՐՈՖԵՍՈՐ ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ԱՆՑԿԱՑՐԵՑ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍ՝ ՆՎԻՐՎԱԾ «ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 100-ԱՄՅԱԿԻՆ», ՈՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԵՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՄՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

2021թ. մարտի 22-ին Եվրոպական համալսարանում հյուրընկալվեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.դ., պրոֆ. Կարեն Խաչատրյանը, ով ԵՀ Իրավագիտության և միջազգային հարաբերություններ ֆակուլտետի ուսանողների համար անցկացրեց վարպետության դաս՝ նվիրված «Մոսկվայի պայմանագրի 100-ամյակին»:

Իր ելույթում Կ. Խաչատրյանն ուսանողներին հանգամանալից ներկայացրեց Մոսկվայի պայմանագրի պատմական և իրավական հենքերը, 1920-1921 թթ. տարածաշրջանում առկա միջազգային դրությունը, ինչպես նաև անդրադարձ կատարեց Բաթումի, Սևրի, Ալեքսանդրապոլի և Կարսի պայմանագրերի լուսաբանմանը:

Ելույթից հետո տեղի ունեցավ քննարկում, մտքերի փոխանակում, հարց-պատասխան, որի ընթացքում բանախոսը պատասխանեց ներկաներին հուզող հարցերին:

## PROFESSOR KAREN KHACHATRYAN HELD A MASTER CLASS DEDICATED TO THE “100TH ANNIVERSARY OF THE MOSCOW TREATY”, WHICH WAS ATTENDED BY STUDENTS OF THE EU LAW AND INTERNATIONAL RELATIONS

On March 22, 2021, the European University hosted the Deputy Director of the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Associate Professor of Historical Sciences, Professor Karen Khachatryan, who conducted a master class for students of the EU Faculty of Law and International Relations. The master class was dedicated to the “100th anniversary of the Moscow Treaty”.

In his speech K. Khachatryan presented to the students in detail the historical and legal bases of the Moscow Treaty, the current international situation in the region in 1920-1921, as well as he presented the Batumi, Sevre, Alexandropol and Kars agreements.

After the speech there was a discussion, exchange of views, questions and answers, during which the speaker answered the questions of the audience.




## ԵՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԵՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական Համալսարանի ուսանողները հրավեր էին ստացել «Կոկա-Կոլա Հելենիկ Արմենիա» ընկերության ժամանակակից տեխնոլոգիաներով և ներառական լուծումներով հագեցած «Այցելուների կենտրոն», որը միակն է տարածաշրջանում և միակը Հայաստանում: Մեր ուսանողները հնարավորություն ունեցան ծանոթանալու Կոկա-Կոլա բրենդի պատմության ամենահետաքրքիր դրվագներին, տեղեկացան ընկերության գործունեության մասին՝ կիրառվող նորարար տեխնոլոգիաներին, իրականացվող նախագծերին, ռազմավարությանը, տեսան շշալցման հոսքագծերը և, իհարկե վայելեցին իրենց սիրելի ըմպելիքները:

## THE EUA STUDENTS VISITED “COCA-COLA HELLENIC ARMENIA”

The students of the European University were invited to the “Visitor Center” of Coca-Cola Hellenic Armenia, equipped with modern technologies and inclusive solutions, which is the only one in the region, and in Armenia.

Our students had an opportunity to get acquainted with the most interesting episodes in the history of the Coca-Cola brand, learnt about the company’s activities, innovative technologies, implemented projects, strategies, saw bottling lines, surely enjoying their favorite drinks.

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ

2020թ. նոյեմբերի 14-ին կայացավ ծրագրավորման միջազգային ուսանողական ICPC (International Collegiate Programming Contest) Օլիմպիադան, որին մասնակցում էին մի շարք հայաստանյան թիմեր: Եվրոպական համալսարանը ներկայացնում էին հայաստանյան և արտերկրյա ուսանողներից կազմված երկու թիմեր, որոնք, հաջողությամբ անցան ծրագրավորման ոլորտում ամենահայտնի և մասսայական այս օլիմպիադայի կիսաեզրափակիչ՝ ստանալով հավաստագրեր:




## STUDENTS OF THE INFORMATION TECHNOLOGIES FACULTY OF THE EUROPEAN UNIVERSITY TOOK PART IN THE INTERNATIONAL OLYMPIAD

On November 14, 2020 ICPC (International Collegiate Programming Contest) International Student Olympiad took place, in which several Armenian teams took part.

The European University was represented by two teams of Armenian and international students, who successfully passed the semifinals of this most famous and popular Olympiad in the field of programming, and they received certificates.



## ԲԱՑ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԷԼԻՏԱՐ ԹՐԱՎԵԼ» ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՀ ՍԵՐՎԻՍ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մարտի 9-ին «Travel House Business Centre»-ում տեղի ունեցավ «Էլիտար Թրավել Ընկերության» կողմից կազմակերպված բաց դասընթաց, որին մասնակցելու հնավարություն էր ընձեռնված Եվրոպական Համալսարանի Սերվիս մասնագիտության 1-ից 4-րդ կուրսերի լավագույն ուսանողներին:

Դասընթացի ընթացքում անդրադարձ կատարվեց Covid-19-ի ազդեցությանը Հայաստանում զբոսաշրջության ոլորտի վրա, ինչպես նաև ներկայացվեց ՀՀ շուկայում խոշորագույնը համարվող «Էլիտար Թրավել ընկերության» գործունեությունը, նոր ծրագրերը և նախատեսվող մասնագիտական կարողությունների զարգացման դասընթացները:

ԵՀ այն լավագույն ուսանողները, ովքեր բարեհաջող կավարտեն փորձաշրջանը և կմասնակցեն նախատեսվող դասընթացներին հնարավորություն կունենան աշխատանք ստանալ ընկերությունում:



## OPEN LECTURES, HELD BY “ELITE TRAVEL COMPANY” FOR THE SERVICE SPECIALTY STUDENTS OF EUA

On March 9, the “Travel House Business Center” hosted an open lecture organized by “Elite Travel Company”, which was open for the best students from 1-4 years of the Department Service in the EUA.

During the training, “the impact of Covid-19” on the sphere of tourism in Armenia was touched upon, as well as the activities of the "Elite Company", which is considered to be the largest in the Armenian market, new programs and the planned courses were also discussed.

The best students from EUA, who want to take part in the further lectures will get a permanent job possibility in the company after the successful completion of the probation period.

## ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Բակալավրի և մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորումը տեղի է ունեցել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության միջոցով:

Հաշվետու ժամանակաշրջանում /2020-2021 ուստարի/ 267 ուսանող ամփոփիչ ատեստավորման արդյունքում ստացել են բակալավրի որակավորման և մագիստրոսի որակավորման դիպլոմներ, այդ թվում՝

- Առկա բակալավրիատ՝ 170 ուսանող,
- Հեռակա բակալավրիատ՝ 50 ուսանող,
- Առկա մագիստրատուրա՝ 36 ուսանող
- Հեռակա մագիստրատուրա՝ 11 ուսանող:

2019-2020 ուստարում այդ ցուցանիշը կազմել է 326, 2018-2019թ.-ին՝369, 2017-2018թ.-ին՝ 268, 2016-2017թ.-ին՝ 386, 2015-2016թ.-ին՝ 464 ուսանող:

Վերջին տարիների շրջանավարտների թվաքանակի փոփոխությունը ներկայացված է ստորև (տե՛ս գծապատկեր 2).

## GRADUATES

The final attestation of the bachelor’s and master’s degree took place through the defense of the graduation papers and masters theses.

In the reporting period /2020-2021 academic year/, as a result of final attestation 267 students received Bachelor's degree and Master's degree diplomas.

- Full-time Bachelor’s degree: 170 students,
- Part-time Bachelor’s degree: 50 students,
- Full-time Master’s degree: 36 students,
- Part-time Master’s degree: 11 students.

In 2019-2020 academic year the indicator of the number of students was 326, in 2018-2019 academic year it was 369, in academic year it was 268, in 2016-2017 academic year it was 386, in 2015-2016 academic year it was 464 (students).

The dynamics of graduates in recent years (see chart 2):

The change in the number of graduates in recent years is presented below (see Figure 2).




Գծապատկեր/Chart 2. Շրջանավարտների թիվը 2013-2021թթ./ Number of graduates: 2013-2021

2020-2021 ուստարվա շրջանավարտների 11%-ը ստացել է գերազանցության դիպլոմ, այդ թվում՝ 15 ուսանող՝ բակալավրի որակավորմամբ և 14 ուսանող մագիստրոսի որակավորմամբ:

## ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Եվրոպական համալսարանի ուսանողներին տրամադրվում են ուսման վարձի փոխհատուցումներ ինչպես պետության, այնպես էլ բուհի կողմից:

ՀՀ ԿԳՆ սահմանված կարգով Բուհի ուսանողներին տրամադրվում են փոխհատուցում՝ վարձավճարից, հետևյալ չափանիշների հիման վրա.

- Արտոնություններից օգտվողներին (ուսման վարձի լրիվ փոխհատուցում)
- Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում
- Պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում

2020-2021 ուստարվա ընթացքում տրամադրված զեղչերը ներկայացնենք ստորև (տե՛ս աղյուսակ 1).

In 2020-2021 academic year, 11% of EU graduates received diplomas of excellence, including 15 Bachelor's degree students and 14 Master's degree students.

## TUITION FEE REIMBURSEMENT

Tuition reimbursement is provided to EU students by both the state and the university.

In accordance with the procedure established by the RA Ministry of Education and Science, the University students are provided with compensation from the tuition fee, based on the following criteria:

- Beneficiaries (full tuition reimbursement)
- Full reimbursement of tuition fees by the state
- Partial reimbursement of tuition fees by the state

The discounts provided during 2020-2021 academic year are presented below: (see chart 1).

**Աղյուսակ/ Chart 1. Պետության կողմից ուսնողների վարձի փոխհատուցում/ Reimbursement of tuition fees by the state**

| N | ՏԵՍԱԿ/ TIPE | ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ/ BACHELOR'S DEGREE |
|---|---|---|
| 1 | Արտոնություններից օգտվողներին/ Beneficiaries | 27 ուսանող/students |
| 2 | Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում (այդ թվում՝ «Պատիվ ունեմ» ծրագրով)/ Full reimbursement of tuition fees by the state (Including "Pativ unem" program) | 7 ուսանող/students |
| 3 | Պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում/ Partial reimbursement of tuition fees by the state | 137 ուսանող/students |

Համալսարանի կողմից ուսանողներին տրվում են զեղչեր Բուհի հաշվին՝ հետևյալ չափանիշներից ելնելով և համամասնություններով (տե՛ս աղյուսակ 2).

In addition to the above, the students of the University are given discounts at the expense of the University, based on the following criteria: (see chart 2).

### Աղյուսակ/Chart 2. 2020-2021 ուստարում Բուհի կողմից ուսանողներին տրամադրված զեղչերը/ Discounts provided to students by the University in 2020-2021 academic year

| N | Զեղչի Տեսակ/ Discount Type | 10% | 15% | 20% | 25% | 30% | 50% | 70% | 75% | 100% | Total |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ապրիլյան պատերազմի մասնակիցներին/ Participants of the April War | | | | | 3 | 16 | | | | 19 |
| 2. | Մարտական հերթափոխի մասնակիցներին/ Participants of the combat shift | | 65 | | | | | | | | 65 |
| 3. | Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին/ Children from socially vulnerable families | 10 | | 9 | 3 | | 3 | 1 | 1 | | 27 |
| 4. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներին/ One-sided orphans | 9 | | | | | | | | | 9 |
| 5. | Սիրիահայ ուսանողներին տրամադրվող զեղչ/ Syrian-Armenian students | | | 83 | | | | | | | 83 |
| 6. | Հաշմանդամ ծնող ունեցող երեխաներին/ Children with disabled parents | | 5 | | | | | | | | 5 |
| 7. | Նույն ընտանիքից ԵՀ-ում երկու ուսանող միաժամանակ ունենալու դեպքում/ Two students from the same family in EU at the same time | | 16 | | | | | | | | 16 |
| 8. | Աշխատակիցների երեխաներին/ Children of the employees | | | | 11 | | | | | | 11 |
| 9. | Առաջադիմության հիմքով/ On the basis of progress | | | | 10 | | 9 | | 9 | 1 | 29 |
| 10. | ԵՀ նախապատրաստականից և քոլեջներից ընդունված/ Students admitted from EU preparatory courses/department and colleges | 23 | | | | | | | | | 23 |
| ԸՆԴԱՄԵՆԸ/ TOTAL | | 42 | 86 | 92 | 24 | 3 | 28 | 1 | 10 | 1 | 287 |

## 2021Թ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2021[1]թ.-ին ԵՀ ընդունվել են շուրջ 731 դիմորդ: Ընդունելության արդյունքներն ըստ մասնագիտությունների հետևյալն են (տե՛ս աղյուսակ 3).

## ADMISSION RESULTS 2021

In 2021[1], about 731 applicants have been admitted to EU. Admission results by specialities are as follows: (see chart 3).

### Աղյուսակ/Chart 3. 2020թ. ընդունելության արդյունքները/ ADMISSION RESULTS 2020

| N | Մասնագիտություն/ Specialty | Բակալավրիատ/ Bachelor's degree | | | | Մագիստրատուրա/ Master's Degree | | | | Քոլեջից 2-րդ կուրս/ 2nd year from college | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առկա/ Full-time | | Հեռակա/ Part-time | | Առկա/ Full-time | | Հեռակա/ Part-time | | Առկա/ Full-time | | Հեռակա/ Part-time | |
| | | ՀՀ/ RA | Օտար/ Foreign | ՀՀ/ RA | Օտար/ Foreign | ՀՀ/ RA | Օտար/ Foreign | ՀՀ/ RA | Օտար/ Foreign | ՀՀ/ RA | Օտար/ Foreign | ՀՀ/ RA | Օտար/ Foreign |
| 1. | Տեղեկատվական տեխնոլոգիաներ/ Information Tecgnologies | 49 | 6 | 42 | | 4 | 4 | | | | | 12 | |
| 2. | Ինֆորմատիկա / Informatics | | | | | | | | | | | 12 | |
| 3. | SS /Կապի միջոցների և միկրոէլեկտրոնային սխեմաներ/ Information Tecgnologies /Synopsis: Communication means and microelectronic circuits/ | | | | | 12 | | | | | | | |
| 4. | Գրաֆիկական դիզայն/ Graphic design | 22 | 1 | | | | | | | 5 | | | |
| 5. | Սերվիս/ Service | 15 | | | | | | | | | | | |
| 6. | Մշակութաբանություն/ Culturology | | | 8 | | | | | | | | 12 | |
| 7. | Տնտեսագիտություն/ Economics | | | | | | | | | | | 15 | |
| 8. | Կառավարում/ Management | 72 | 8 | 112 | | 9 | 2 | 5 | | | | 24 | |
| 9. | Ֆինանսներ/ Finances | 22 | | 10 | | | | | | | | 12 | |
| 10. | Իրավագիտություն/ Law | 74 | 2 | 54 | | 4 | | 8 | | | | 8 | |
| 11. | Միջազգային հարաբերություններ/ International relations | 18 | 1 | 5 | | 5 | 1 | | | | | | |
| 12. | Լեզվաբանություն/ Linguistics | 16 | | | | | | | | 1 | | | |
| 13. | Ճարտարապետություն/ Architecture | | | | | | | | | | | | |
| 14. | Հոգեբանություն/ Phsycology | 27 | 5 | 7 | | | | | | | | | |
| Ընդամենը/ Total | | 315 | 23 | 238 | 0 | 34 | 7 | 13 | 0 | 6 | 0 | 95 | 0 |

[1] 30.09.2021 դրությամբ օտարերկրացիների ընդունելությունը դեռ ընթացքի մեջ է/ as of 30.09.21 the admission of foreigners is still in process

Դիմորդների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել է 7%-ով (2020թ.-ին՝ 687, 2019թ.-ին՝ 611):

Բուհ-դպրոց և բուհ-քոլեջ համագործակցության շրջանակներում Եվրոպական համալսարանի աշխատակազմը շարունակական աշխատանքներ է իրականացնում քոլեջների, ավագ դպրոցների աշակերտների և շրջանավարտների հետ, փորձելով նաև աջակցել նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում:

The number of applicants has increased by 7% compared to the previous year (in 2020 were 687 applicants, in 2019 were 611).

In the framework of the university-school and university-college cooperation, the staff of the European University continuously works with colleges, high school students and alumni, trying to assist them in their professional orientation.



## ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՀ ԱԿՏԻՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ս.թ. սեպտեմբերի 28-ին Եվրոպական համալսարանը իրականացրեց այց Վաղարշապատի Գր. Նարեկացու անվան թիվ 2 ավագ դպրոց: Այցի ընթացքում ԵՀ Պրոֆեսորադասախոսական կազմ ներկայացուցիչները ավարտական դասարանների աշակերտներին մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու նպատակով ներկայացրեցին մասնագիտությունները և դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև ԵՀ-ում առկա մասնագիտությունները, բուհի առավելությունները, հեռանկարները, ինչպես նաև ապագա դիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով: Այցի ընթացքում ԵՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Գ.Մանասյանը, որպես փոքրիկ նվեր, դպրոցի տնօրենին հանձնեց պլանշետ:



## EU ACTIVITY CONTINUES WITHIN HEI-SCHOOL COOPERATION

This year On September 28, the European University paid a visit to Vagharshapat N 2 High school after Gr. Narekatsi. During the visit, the EU faculty members presented the professions, their features, as well as the existing professions in EU, the advantages, prospects in order to facilitate the professional orientation of graduate students. During the visit, the Vice-Rector for Education of the EU G. Manasyan handed a tablet to the school principal as a small gift.



## ԲՈՒՀ- ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿ-ՑՈՒԹՅՈՒՆ, ԱՅՍ ԱՆԳԱՄ 119 ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Եվրոպական համալսարանը, շարունա-կելով համակողմանի համագործկցությունը դպրոցների հետ, ս.թ. դեկտեմբերի 15-ին իրականացրեց այց Երևանի թիվ 119 ավագ դպրոց: ԵՀ պրոֆեսորադասախոսական կազմը հանդիպեց ավարտական դասարանի աշակերտներին՝ ներկայացնելով կրթական ծրագրերի առանձնահատկությունները, արտերկրում ուսանելու հնարավորությունները, աշխատանքի ընդունման հեռանկար-ները և այլն: Այցի ընթացքում ԵՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Գ.Մանասյանը բուհի կողմի դպրոցին նվիրեց համակարգչային պլանշետ՝ որպես փոքրիկ նվեր:



## UNIVERSITY-SCHOOL COOPERATION AT HIGH SCHOOL NO. 119

The European University continuously cooperates with schools. This year on December 15 EU visited Yerevan High School No. 119. The EU teaching staff met the graduating students, presented the peculiarities of educational programs, opportunities to study abroad, employment prospects, etc., as well as they provided advice to support the professional orientation of graduates. During the visit, Gor Manasyan, EU vice-rector for science and education, gave a tablet to the school as a small gift.

## ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Եվրոպական համալսարանը, նոր ուսումնական կիսամյակի մեկնարկին զուգահեռ, տարբեր ձևաչափով, շարունակում է մասնագիտական կողմնորոշման նպատակով դպրոցականների հետ հանդիպումները: Հանդիպումների ընթացքում մանրամասն տեղեկատվություն է ներկայացվել մասնագիտությունների առանձնահատկությունների, աշխատանքային հնարավորու-թյունների, ինչպես նաև ԵՀ ֆակուլտետների, մասնագի-տությունների, համալսարանական կյանքի, կրթական ծրագրերի առանձնահատկությունների, արտերկրում ուսանելու հնարա-վորությունների և այլնի մասին: Դպրոցներում ԵՀ-ի կողմից անցկացվեցին պրեզենտացիաներ, բաց դասախոսություններ, քննարկումներ, որոնք ավելի առարկայական դարձրեցին աշակերտների պատկերացումները բուհի մասին:



## THE UNIVERSITY-SCHOOL COOPERATION CONTINUES

At the beginning of the new semester, the European University continues meetings with schoolchildren in various formats for professional orientation. During the meetings, detailed information was provided on the peculiarities of professions, job opportunities, as well as EU faculties, specialties, university life, peculiarities of educational programs, opportunities to study abroad, etc. Presentations, open lectures, discussions were held by the EU in schools, which made the students' ideas about the university more tangible.

## ԱՊԱԳԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս. թ. փետրվարի 16-ին ճանաչողական այցի շրջանակում, Եվրոպական համալսարանը հյուրընկալել էր Երևանի N 6 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողներին:

Ուսանողները շրջեցին համալսարանում, ծանոթացան համալսարանում առկա բաժիններին, առաջարկվող մասնագիտություններին, գրադարանին, ընթերցասրահին, զրուցեցին ամբիոնի վարիչների հետ:

Ապագա դիմորդների այցն ամփոփվեց դասալսմամբ, որի ընթացքում նրանք ծանոթացան համալսարանական առօրյային, դարձան ԵՀ մի մասնիկը:

## INFORMATIVE VISIT OF FUTURE APPLICANTS TO THE EUROPEAN UNIVERSITY

On February 16, 2021, within the framework of an informative visit, the European University hosted the students of Yerevan State Vocational (handicraft) School N 6. The students toured the university, got acquainted with the departments of the university, the offered specialties, the library, the reading room, had conversations with the heads of the departments.

The visit of the future entrants was summed up with a lesson, during which they got acquainted with the university routine and became a part of the EU.









### «ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԵՂԾԵԼ ԲԻԶՆԵՍ» ԹԵՄԱՅՈՎ ԲԱՑ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՔՈԼԵՋՈՒՄ

Եվրոպական Համալսարանի Կառավարման ամբիոնի վարիչ տնտ.գ.թ. Ն.Կիրակոսյանը Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի կառավարում և ֆինանսներ մասնագիտությունների ավարտական կուրսերի ուսանողների համար անցկացրեց բաց դասախոսություն՝ «Ինչպե՞ս ստեղծել բիզնես» թեմայով: Ազատ քննարկման ձևաչափով ունկնդիրներին ներկայացվեցին ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար բազային հասկացությունները և գործիքներ:

### OPEN LECTURE ON "HOW TO CREATE A BUSINESS?" AT THE YEREVAN STATE TECHNOLOGICAL COLLEGE

PhD in Economics, Associate Professor, Head of the Chair of Management of European University N. Kirakosyan held an open lecture on "How to create a business?" for Management and Finance graduate students of the Yerevan State Technological College.

In a free discussion format, the audience was introduced to the basic concepts and tools for doing business.



### ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եվրոպական համալսարանը հյուրընկալեց և մասնագիտական դասախոսություններ անցկացրեց Եվրոպական քոլեջի ուսանողների համար: Զբոսաշրջության, կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների, լեզվաբանության արդիական թեմաների շուրջ դասախոսություններ իրականացրեցին

• ԵՀ Կառավարման ամբիոնի վարիչ Նարինե Կիրակոսյանը՝

### PROFESSIONAL LECTURES FOR EUROPEAN COLLEGE STUDENTS

The European University hosted and held professional lectures for European College students. Lectures on current topics of tourism, management, information technologies, linguistics were carried out by:

• Narine Kirakosyan, Head of the Chair of Management, European University on "Development of the strategic plan of the organization",

• Susanna Harutyunyan, Head of the Chair of Information Technologies and Applied Mathematics on "Modern IT

«Կազմակերպության ռազմավարական պլանի մշակում» թեմայով,
• Տեղեկատվական տեխնոլոգիաներին կիրառական մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Սուսաննա Հարությունյանը՝ «Ժամանակակից ՏՏ հնարավորությունները Հայաստանում» թեմայով,
• Զբոսաշրջության և սպասարկման ամբիոնի դասախոս Արմինե Մատենցյանը՝ «Կուրորտաբանություն: Առողջարանային բուժման ձևերը Հայաստանում» թեմայով,
• Կիրառական լեզվաբանության ամբիոնի դասախոս Լուսինե Սարգսյանը՝ «Բանավոր թարգմանությունների զարգացումը TED հրապարակային ելույթների միջոցով» թեմայով:
Հանդիպումների ընթացքում ԵՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Գ. Մանասյանը, ԵՀ արտաքին կապերի գծով պրոռեկտոր Վ. Սողոմոնյանը և ամբիոնի վարիչները ներկայացրեցին ընդունելության կարգը, արտաքին կապերը, մասնագիտությունների առանձնահատկություններն ու հեռանկարները, ԵՀ-ում սովորելու առավելությունները:

Opportunities in Armenia",
• Armine Matentsyan, Lecturer of the Chair of Tourism and Service on “Spa treatment. Forms of spa treatment in Armenia”,
• Lusine Sargsyan, Lecturer of the Chair of Applied Linguistics, on "Developing Oral Translations through TED Public Speaking".
During the meetings, EU Vice-Rector for Academic Affairs, EU Vice-Rector for International Relations V. Soghomonyan and the heads of the chairs presented the admission procedure, external relations, peculiarities and perspectives of the professions, and the benefits of studying at the EU.



## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ «ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԵԿԱՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԿԱՆ ՔՈԼԵՋՈՒՄ

Եվրոպական համալսարանի նախաձեռնությամբ ԵՀ Լրացուցիչ կրթության և կարիերայի զարգացման դեպարտամենտի ղեկավար, ԵՀ կառավարման ամբիոնի դասախոս, PMP որակավորում ունեցող, ԱՄՆ-ի Rutgers Բիզնես դպրոցի



## LECTURER OF THE EUROPEAN UNIVERSITY G. AVETISYAN DELIVERED A LECTURE ON "PROJECT MANAGEMENT" AT THE FRENCH COLLEGE IN ARMENIA

At the initiative of the European University, the Head of the EU Department of Life Long Learning and Career Development, Lecturer at the EU Chair of Management, with PMP qualification, USA Rutgers Business School graduate Gohar Avetisyan delivered a

շրջանավարտ Գոհար Ավետիսյանը անցկացրեց «Նախագծերի կառավարում» թեմայով դասախոսություն Հայաստանում ֆրանսիական քոլեջի ուսանողների համար: Դասախոսությունը հնարավորություն ընձեռեց ուսանողներին ծանոթանալու նախագծերի կառավարման գործընթացներին և փուլերին, նախագծերի բովանդակությանը, նախագծերի ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարման հնարավորություններին:

lecture on "Project Management" for French college students in Armenia.

The lecture provided students with an opportunity to learn about the processes and stages of project management, project content, project financial and human resource management opportunities.



## ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Եվրոպական համալսարանը հյուրընկալեց Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «Ճարտարապետություն» մասնագիտության ուսանողներին:

Ուսանողները շրջայց կատարեցին բուհում և մասնակցեցին ԵՀ Ճարտարապետության ամբիոնի դասախոսներ Նունե Գևորգյանի «Նորագույն ճարտարապետություն» թեմայով դասախոսությանը և Անահիտ Սարգսյանի նախագծերի պրեզենտացիային:

## THE VISIT OF THE STUDENTS OF "ARCHITECTURE" SPECIALTY OF SHUSHI TECHNOLOGICAL UNIVERSITY TO THE EUROPEAN UNIVERSITY

The European University hosted the students of "Architecture" specialty of Shushi Technological University.

The students toured the university and participated in a lecture by Nune Gevorgyan, on "Modern Architecture" and a presentation of Anahit Sargsyan's projects. They are lecturers at the European University at the Chair of Architecture.

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԲԱՑ ԴԱՍ ԷՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Բուհ-Քոլեջ համագործակցության շրջանակում՝ ս.թ. փետրվարի 24-ին Եվրոպական համալսարանը հյուրընկալեց Հայաստանում Ֆրանսիական քոլեջի ուսանողներին, ովքեր ներկա գտնվեցին ի.գ.թ., դոցենտ, ԵՀ իրավագիտության ամբիոնի դասախոս, ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ Մանուկ Մուրադյանի դասախոսությանը: Ուսանողները մեծ հետաքրքրությամբ ունկնդրեցին Մ.Մուրադյանի դասախոսությունը ձեռք բերելով մի շարք գործնական գիտելիքներ իրավագիտության ոլորտում:

## AN OPEN LESSON WAS ORGANIZED FOR THE STUDENTS OF THE FRENCH COLLAGE AT THE EUROPEAN UNIVERSITY

Within the framework of the University-College cooperation, this year on February 24, the European University hosted the students of the French College in Armenia, who attended the lecture of Manuk Muradyan, Candidate of Juridical Sciences, Associate Professor, Lecturer of the EU Chair of Law, Head of the Legal Department of the RA Police. The students listened to M. Muradyan's lecture with great interest, gaining a number of practical knowledge in the field of law.

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՎԵՐԱԿՆՔԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԵՎԱՆԻ Ն.ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 2 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՀԵՏ

Քոլեջ-բուհ համագործակցության ընդլայման, մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացման նպատակով Եվրոպական համալսարանը վերակնքեց համագործակցության պայմանագիրը Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի հետ:

Պայմանագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մասնագիտական կրթության զարգացմանը միտված մի շարք ծրագրեր: Վերակնքված պայմանագիրը հիմք կհանդիսանա բազմակողմանի ձևաչափով համագործակցության խորացման համար:



## THE EUROPEAN UNIVERSITY UPDATED THE COOPERATION AGREEMENT WITH THE YEREVAN REGIONAL STATE COLLEGE NO. 2 NAMED AFTER N. ACHEMYAN

In order to expand cooperation between the college and the university, to improve the efficiency of vocational education, the European University updated the cooperation agreement with the Yerevan Regional State College No. 2 named after N. Achemyan. The agreement provides implementation of a number of programs aimed at the development of professional education. The updated agreement will be the basis for deepening cooperation in a multilateral format.

*Ընդունելությանը նպաստելու նպատակով Եվրոպական համալսարանը հաշվետու ուսումնական տարում կազմակերպեց նաև Բաց դռների օրեր, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ունեցավ Կրթություն և Կարիերա ամենամյա ցուցահանդեսում:*

*In the reporting academic year, in order to promote the admission, the European University organized Open Door Days, as well as actively participated in "Education and Career" annual exhibition.*

---




2021թ. ապրիլի 22-23-ը Եվրոպական համալսարանում կազմակերպվել էր Բաց դռների օրեր, որի ընթացքում բուհ էին այցելել Երևանի և հարակից շրջանների աշակերտների և քոլեջների ուսանողներ: Միջոցառման շրջանակներում այցելուները ծանոթացան բուհի մասնագիտություններին, ռեսուրսներին և առանձնահատկություններին:

On April 22-23, 2020, Open Doors Days were organized at the European University during which pupils and college students from Yerevan and adjacent districts visited the university. Within the framework of the event, the visitors got acquainted with the specialties, resources and peculiarities of the university.

---



Եվրոպական համալսարանը 2021թ. ապրիլի 28-30-ը իր ակտիվ մանսակցությունը ունեցավ Կրթություն և Կարիերա ամենամյա ցուցահանդեսում: Ցուցահանդեսի շրջանակներում ԵՀ Կառավարման ամբիոնի դասախոս Գոհար Ավետիսյանը կարդաց «Նախագծերի կառավարման ներածություն» թեմայով դասախոսություն:



On April 28-30, 2021 the European University took an active part in the "Education and Career" annual exhibition. Within the framework of the exhibition, Gohar Avetisyan, a lecturer at the Chair of Management, held a lecture on "Introduction to Project Management".

---

## ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Բուհի գիտահետազոտական գործունեությունը կարգավորվում է համապատասխան օրենսդրությամբ, Բուհի կանոնադրությամբ և ներքին կարգերով:

ԵՀ հետբուհական կրթական համակարգում պատրաստվում են բարձրագույն որակավորմամբ կադրեր 4 մասնագիտությունների գծով: Դրանք են.

- Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»,
- Ե.13.02 «Ավտոմատացման համակարգեր»,
- ԺԲ.00.02 «Հանրային իրավունք»,
- Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ

«Ժ.02.07 Ռոմանոգերմանական լեզուներ» մասնագիտությամբ թեմաների հաստատման թույլտվությունը ՀՀ Բոկից Բուհը ստացել է 2020 թվականի սեպտեմբերին:

2020-2021 ուստարում բուհի ասպիրանտուրայում ուսումնառել են 55 ասպիրանտներ և հայցորդներ, այդ թվում՝ 14 օտարերկրացի (տե՛ս գծապատկեր 3):

## SCIENTIFIC ACTIVITY

The research activities of the university are regulated by the relevant legislation, by the University Charter, and by internal regulations. The EU postgraduate education system is training highly qualified personnel in 4 specialties. They are:

- Ը.00.02 “Economics, Management of Economy and its Spheres”,
- Ե.13.02 “Automation systems”,
- ԺԲ.00.02 “Public law”,
- Ժ.02.07 “Romano Germanic languages”.

We received a permission to approve themes in the specialty of "Romano-Germanic languages" from the RA SCC in September of 2020.

In 2020-2021 academic year, 55 PhD students students and applicants, including 14 foreigners, studied in the postgraduate program of the university (see Chart 3).




**Գծապատկեր/Chart 3. Հայցորդների և ասպիրանտների թիվը՝ ըստ մասնագիտությունների/ Number of postgraduate students by specialties**

Հաշվետու տարում՝

- առկա ուսուցման 2 ասպիրանտ «ԺԲ.00.02 Հանրային կառավարում» մասնագիտությամբ պաշտպանել են գիտական աստիճանի հայցման ատենախոսությունները՝ ստանալով իրավագիտության թեկնածուի աստիճան,
- առկա ուսուցման 4 ասպիրանտ, հեռակա

In a reporting year՝

- 2 PhD students defended their dissertations in the profession of "ԺԲ.00.02 Public Administration", receiving the degree of Candidate of Law.
- 4 PhD students, 1 part-time PhD student and 7 applicants, 3 of whom are foreign students, have completed their studies at the University and are

ուսուցման 1 ասպիրանտ և 7 հայցորդ, որից 3-ը՝ արտերկրյա սովորողներ, ավարտել են ուսումնառությունը բուհում և պատրաստվում են գիտական ատենախոսության պաշտպանության:

2018թ. ՀՀ գիտության կոմիտեի կողմից կազմակերպված երիտասարդ գիտնականների գիտական ծրագրի շրջանակներում հավանության արժանացած Եվրոպական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դասախոս Արամ Մխիթարյանի ներկայացրած «ՀՀ ագրարային ոլորտի ֆինանսավորման հիմնախնդիրները և լուծման ուղիները ժամանակակից ֆինանսական գործիքների և մեխանիզմների կիրառման միջոցով» ծրագրի 2-րդ փուլը կշարունակվի հաշվետու տարում: Ծրագիրը իրականացվում է ԵՀ Կառավարման ամբիոնի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ: Ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում և քննարկվում են ԵՀ գիտական խորհրդում:

Տարեկան երկու անգամ ԵՀ գիտական խորհրդի կողմից երաշխավորվում է հրատարակվում է «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածուն, որը ներառված է ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականների ցանկում:

Հաշվետու տարում հրատարակվել է 2 գիտական հոդվածների ժողովածու՝ N11(02) և N12(01), որոնց մեջ

going to defend their scientific dissertation.

In 2018 the second phase of "Problems of financing the RA agricultural sector and solution ways through the use of modern financial tools and mechanisms" program which was presented by Aram Mkhitaryan, a lecturer at the Faculty of Economics and Management of European University, was approved by the RA Committee of Science in 2018 and will be continued in the reporting year. The program is implemented with the participation of lecturers and students of the Faculty of Economics and Management of EU. Project implementation reports are regularly submitted and discussed at the EU Scientific Council.

Twice a year, EU Scientific Council guarantees the publication of the "European University" collection of scientific articles which is in the list of journals accepted by the Supreme Certifying Committee.

In the reporting year, 2 collections of scientific articles was published: N11(02) and N12(01), which accordingly includes about 40 and 46 scientific articles from economics, management, law, linguistics, psychology, pedagogy, philosophy, political science, history, informatics, tourism and other fields.

The high level and reputation of the Collection of scientific articles is ensured due to the checking of the originality by using electronic review system and closed review tools.

Though academic year 2020-2021 was full of trials, EU

համապատասխանաբար տեղ են գտել թվով 40 և 46 գիտական հոդվածներ՝ տնտեսագիտության, կատավարման, իրավագիտության, լեզվաբանության, հոգեբանության, մանկավարժության, փիլիսոփայության, քաղաքագիտության, պատմության, ինֆորմատիկայի, զբոսաշրջության և այլ ոլորտներում:

Յուրօրինակությունը ստուգելու էլեկտրոնային համակարգի և փակ գրախոսության գործիքների կիրառման շնորհիվ ապահովվում է ժողովածուի բարձր մակարդակը և հեղինակությունը:

Թեպետ 2020-2021թթ ուսումնական տարին լի էր փորձություններով, այնուամենայնիվ ԵՀ պրոֆեսորադասախոսական կազմն իրականացրել է հետազոտություններ, որոնց արդյունքներն արտացոլված են մի շարք գիտական հոդվածներում (այդ թվում՝ միջազգային գիտական հանդեսներում), հրատարակվել են մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, որոնք կիրառվում են ի նպաստ արդյունավետ ուսումնառության (տե՛ս աղյուսակ 4.):

academic staff conducted research the results of which are reflected in a number of scientific articles (including international scientific journals), monographs and teaching and methodological manuals have been published that are used for the benefit of productive learning (see chart 4.).

## Աղյուսակ/Chart 4. 2020-2021 ուստարվա ընթացքում ԵՀ ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեության արդյունքները/ The results of the research activities of the EU academic staff within 2020-2021 academic year

| | Կառավարման ամբիոն/ Chair of Management | Տնտեսագիտության և ֆինանսների ամբիոն/Chair of Economics and Finance | Հոգեբանության ամբիոն/ Chair of Psychology | Կիրառական լեզվաբանության ամբիոն/ Chair of Applied Linguistics | Միկրոէլեկտրոնային սխեմաների ու համակարգերի ամբիոն/ Chair of Microelectronic Circuits and Systems | Ճարտարապետության ու Դիզայնի ամբիոն/ Chair of Architecture and Design | Միջազգային հարաբերությունների ամբիոն/ Chair of International Relations | ՏՏ և կիրառական մաթեմատիկայի ամբիոն/ Chair of IT and Applied Mathematics | Տուրիզմի ու Սերվիսի ամբիոն/ Chair of Tourism and Service | Իրավագիտության ամբիոն/ Chair of Law | Ընդամենը/ Total |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գիտական հոդվածներ հայաստանյան հանդեսներում/ Scientific articles in the Armenian journals | 25 | 22 | 10 | 12 | 16 | 1 | 4 | 7 | 6 | 24 | 123 |
| Գիտական հոդվածներ միջազգային հանդեսներում/ Scientific articles in the international journals | 16 | 8 | 6 | 2 | 3 | 1 | 3 | 1 | | 1 | 45 |
| Գիտական զեկույցներ Հայաստանում տեղի ունեցած կոնֆերանսների կամ այլ գիտական միջոցառումների ընթացքում / Scientific reports in conferences or other scientific events in the RA | 11 | 5 | 7 | 3 | 6 | | 7 | 3 | 2 | 19 | 59 |
| Գիտական զեկույցներ միջազգային կոնֆերանսներում կամ այլ գիտական միջոցառումներում/ Scientific reports in international | 8 | 4 | 4 | 7 | | | 3 | 1 | | 1 | 28 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| conferences or other scientific events | | | | | | | | | | | |
| Մասնագիտական վերապատրաստումներ / Professional trainings | 8 | 5 | 4 | 28 | 3 | | 2 | | 4 | 8 | 62 |
| Մեթոդական վե-րապատրաստումներ/Methodological trainings | 12 | 7 | 6 | 31 | | | 3 | 1 | | 3 | 63 |
| ԵՀ-ում իրակա-նացվող վերա-պատրաստումներ / Trainings conducted at EU | 10 | 7 | 1 | 14 | | | 3 | 1 | 6 | 3 | 45 |
| Մենագրություն-ներ հրատարակ-ված ՀՀ-ում/ Monographs published in the RA | 5 | 1 | | | 1 | | 1 | 2 | | 3 | 13 |
| Մենագրություն-ներ հրատարակ-ված արտասահ-մանում/ Monographs published abroad | 4 | | | | | | | | | | |
| Ուսումնամեթո-դական ձեռնարկ-ներ/ Teaching and methodological manuals | | 1 | | | 3 | | 1 | 3 | | 1 | 9 |

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՀ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հրատարակվել է 168 գիտական հոդվածներ, որոնց մոտ 25%-ը՝ միջազգային հեղինակավոր գիտական հանդեսներում: Գիտական հոդվածների մեծ մասը բաժին է ընկնում Իրավագիտության, Կառավարման, Տնտեսագիտության և ֆինանսների ամբիոնների դասախոսներին, իսկ միջազգային հանդեսներում հրատարակված գիտական հոդվածների քանակով առաջատար են Կառավարման ամբիոնի դասախոսները:

2020-2021թթ ուստարում գիտական միջոցառումներին և կոնֆերանսներին ԵՀ ՊԴ կազմի ներկայացուցիչները ներկայացրել են 91 զեկույց, որի մոտ 31%-ը միջազգային կոնֆերանսներում: Կոնֆերանսներում ակտիվ մասնակցություն են ունեցել հիմնականում Իրավագիտության և Կառավարման ամբիոնների դասախոսները, միջազգային կոնֆերանսներում զեկույցների թվով առանձնանում են Կառավարման և Կիրառական լեզվաբանության ամբիոնների դասախոսները:

ԵՀ ՊԴ կազմից մոտ 115 դասախոս 2020-2021 ուստարվա ընթացքում առնվազն մեկ անգամ մասնակցել է վերապատրաստումների, որի 49%-ը՝ մասնագիտական, 51%-ը՝ մեթոդական: Մեթոդական վերապատրաստումների 50%-ից ավելին կազմակերպված է եղել Եվրոպական համալսարանի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՀ ՊԴ կազմի կողմից հրատարակվել է 17 մենագրություն, որոնցից 4-ը՝

In a reporting year EU academic staff published 168 scientific articles about 25% of which in prestigious international scientific journals. Most of the scientific articles belong to the lecturers of the Chairs of Law, Management, Economics and Finance. The lecturers of the Chair of Management are the leading publishers in international journals.

In 2020-2021 academic year the representatives of the EU academic staff presented 91 reports at scientific events and conferences about 31% of which in international conferences. The lecturers, taking an active participation in the conferences, were mainly from Chairs of Law and Management. The lecturers of the Chairs of Management and Applied Linguistics stand out in the number of reports in the international conferences.

Within 2020-2021 academic yeat 115 lecturers from EU academic staff participated in trainings. 49% lecturers took part in professional trainings, 51%- methodological. More than 50% of the methodological trainings were organized by the European University.

In a reporting period, 17 monographs and 9 teaching and methodological manuals were published by EU academic staff. 4 out of 17 monographs were publish abroad. About 35% of the published monographs and teaching manuals belong to the lecturers of the Chair of Management.

In 2020-2021 academic year Hranush Tovmasyan, PhD, Doctor of Philology, a lecturer of the Chair of Applied

արտասահմանում և 9 ուսումնամեթոդական ձեռնարկ: Հրատարակված մենագրությունների և ուսումնամեթոդական ձեռնարկների մոտ 35%-ը բաժին է ընկնում Կառավարման ամբիոնի դասախոսներին:

2020-2021 ուսումնական տարում ԵՀ Կիրառական լեզվաբանության ամբիոնի դասախոս բ.գ.դ. Հրանուշ Թովմասյանի կողմից հրատարակվել է մեկ բուհական դասագիրք, Միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս Վարդան Մաթևոսյանի կողմից՝ 2 գիտական հետազոտությունների արդյունքներ:

Linguistics published one textbook, and Vardan Matosyan, a lecturer at the Chair of International Relations, published the results of two scientific researches.

---



Նույն թվականի հոկտեմբերի 26-28-ը ԵՀ Կիրառական լեզվաբանության ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ. Սոնա Հակոբյանը, ամբիոնի դասախոսներ՝ բ.գ.թ. Լուսինե Սարգսյանը, բ.գ.թ. Աննա Կարապետյանը, Նատալյա Զաքարյանը, Մարկուհի Ոսկանյանը և ամբիոնի հայցորդ, դասախոս, PEARSON պաշտոնական ներկայացուցիչ Լիզա Մարաբյանը մասնակցեցին Ժամանակակից Լեզուների Եվրոպական Կենտրոնի (ECML) եռօրյա աշխատաժողով- վերապատրաստմանը՝ "Լեզուների համա-եվրոպական համակարգի լեզվական մակարդակների զուգակցումը բազմալեզվական և բազմամշակութային հմտությունների ձևավորմանը" թեմայով, որն առաջին անգամ իրականացվեց առցանց և ECML փորձագետները չկարողացան գալ Հայաստան: Աշխատաժողովի ընթացքում,



On October 26-28, 2021 Sona Hakobyan, PhD, Head of the Chair of Applied Linguistics, lecturers of the Chair, Lusine Sargsyan (PhD), Anna Karapetyan (PhD), Natalya Zakaryan, Markuhi Voskanyan and the applicant, lecturer, Official Representative of PEARSON Lisa Marabyan participated in a three-day workshop-training entitled "***Combining the Language Levels of the Pan-European Language System with the Development of Multilingual and Multicultural Skills***". The training was first held online in Armenia since experts from ECML were not able to come to Armenia. The participants were actively involved in the workshop and through the guidance of international experts of "ECML " are going to apply their gained knowledge at the EU.

մասնակիցները ակտիվորեն ներգրավված էին և ԺԼԵԿ-ի միջազգային փորձագետների ուղղորդմամբ պատրաստվում են ներդնել ձեռք բերված գիտելիքները Եվրոպական համալսարանում:












2020թ. դեկտեմբերի 17-ից 18-ը տեղի ունեցավ «Զանգվածային բաց առցանց դասընթացներ» միջազգային համաժողով, որին տարբեր եվրոպական և ասիական երկրների բարձրագույն ուսումնական, առևտրային, տեխնոլոգիական հաստատություններից մասնակցում էին շուրջ 350 մասնակից և 10-ից ավելի խոսնակներ: Համաժողովը, որն ուներ 10-ից ավել սեկցիաներ 18-ժամ տևողությամբ, իրականացվում էր Data Bridge Market Research միջազգային կազմակերպության կողմից: Եվրոպական համալսարան հիմնադրամը ներկայացնում էին Կառավարման ամբիոնի վարիչ, տնտ. թ., դոցենտ Նարինե Կիրակոսյանը, Կիրառական լեզվաբանության ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Սոնա Հակոբյանը, Որակի ապահովման և կոմունիկացիաների դեպարտամենտի ղեկավար տնտ. թ. Կարինե Սարգսյանը և Լրացուցիչ կրթության և կարիերայի զարգացման դեպարտամենտի ղեկավար, MBA, PMP Գոհար Ավետիսյանը, վերջինս

An international conference on “Massive Open Online Courses” was held on December 17-18, 2020 attended by more than 350 participants and more than 10 speakers from higher educational, commercial and technological institutions of different Asia-European countries. The conference, consisting of more than 10 to 18-hour sessions, was conducted by the international organization Data Bridge Market Research. The European University Foundation was represented by the Head of the Chair of Management and Economics, Associate Professor, PhD Narine Kirakosyan, Head of the Chair of Applied Linguistics, PhD Sona Hakobyan, Head of the Quality Assurance and Communications Department Karine Sargsyan and Head of the Supplementary Education and Career Development Department, MBA, PMP, Gohar Avetisyan, the latter participating as a Conference Speaker on “Continuous Professional Development during COVID times”, as well as a lot of lecturers from the Chair of EU Applied Linguistics.

համաժողովին հանդես է եկել «Շարունակական մասնագիտական զարգացումը COVID-19-ի պայմաններում» թեմայով, ինչպես նաև ԵՀ Կիրառական լեզվաբանության ամբիոնի մի շարք դասախոսներ:
Մասնակցությունը դասընթացին թույլ տվեց, ոչ միայն մասնակցել թեմային առնչվող խնդիրների քննարկմանը, այլ նաև ձեռք բերել մի շարք գործընկերներ, ինչպես նաև համագործակցության առաջարկներ:







## ԵՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՈՒՀԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԱՌՑԱՆՑ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

Եվրոպական համալսարանի աշխատակազմը որակավորման շարունակական բարելավման նպատակով հետևում է մասնագիտական կրթության ոլորտի զարգացումներին և մասնակցում առաջատար կրթական և հետազոտական հաստատությունների և ֆոնդերի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին:
2021թ. հունվարի 12-ին Որակի ապահովման և կոմունիկացիաների դեպարտամենտի ղեկավար Կարինե

Participation at the Conference allowed not only to take part in the discussion of the issues related to the topic, but also to acquire a number of partners, as well as cooperation proposals.

## EU ADMINISTRATIVE EMPLOYEES PARTICIPATED IN THE ONLINE WORKSHOP ON “UNIVERSITY GOVERNANCE AND ACADEMIC LEADERSHIP IN TIMES OF GLOBAL UNCERTAINTY”

The staff of the European University within the scope of vocational education for the continuous professional development participates in the trainings organized by the funds of the leading educational and research institutions. On January 12, 2021 Karine Sargsyan, Head of the Quality Assurance and Communications Department, Narine Kirakosyan, Head of the Chair of Management, Specialist at the Department of Supplementary Education and Career Development participated in the workshop on “University Governance and Academic Leadership in Times of Global Uncertainty”. The following issues were discussed during the workshop:

- University Governance in a time of Pandemic;
- Continuous effects and impacts on the future way of working and governance of the university;

Սարգսյանը և Կառավարման ամբիոնի վարիչ և Լրացուցիչ կրթության և կարիերայի զարգացման դեպարտամենտի մասնագետ Նարինե Կիրակոսյանը մասնակցեցին «Համընդհանուր անորոշության պայմաններում բուհի կառավարման և ակադեմիական առաջնորդության» թեմայով աշխատաժողով: Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին Համավարակի պայմաններում բուհի կառավարման իրականացումը, Բուհի հետագա աշխատելաոճի և կառավարման վրա շարունակական ազդեցություններն ու հետևանքները,

Համավարակի պայմաններում աշխատակազմի ղեկավարման գործնական քայլերը և այլն:

• Practical strategies to lead a team in the pandemic situation; and etc.

## ԼԻՏՎԱՅԻ ԿԱՈՒՆԱՍԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՎԻՐՏՈՒԱԼ ԳԼՈԲԱԼ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՇԱԲԱԹ 2021» ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԵՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Եվրոպական համալսարանը մարտի 22-ից 26-ը մասնակցեց Լիտվայի Կաունասի տեխնոլոգիական համալսարանի կողմից կազմակերպված «Վիրտուալ Գլոբալ Ֆակուլտետի շաբաթ 2021» միջոցառմանը: Նույնիսկ Covid-ի այս դժվար ժամանակահատվածում, նման իրադարձությունների շնորհիվ, կրթության ոլորտում համագործակցությունը շարունակվում է ընդհանուր առմամբ մնալ ակտիվ:

«Գլոբալ Ֆակուլտետի շաբաթ 2021»-ի շրջանակներում մեր համալսարանի չորս ներկայացուցիչներ սիրով մասնակցություն ունեցան իրենց դասախոսություններով՝



## EUA REPRESENTATIVES PARTICIPATED IN “VIRTUAL GLOBAL FACULTY WEEK 2021” EVENT HELD BY KAUNAS UNIVERSITY OF TECHNOLOGY IN LITHUANIA

On March 22-26 European University participated in “Virtual Global Faculty week 2021” event which was organized by Kaunas University of Technology, Lithuania. Even during this Covid hard period, thanks to such events the cooperation in education sphere remains globally active.

Within the Global Faculty week 2021 five representatives

հետևյալ թեմաներով.
1. «Մեխատրոնային համակարգերը արտադրության մեջ» (Վ.Սողոմոնյան, Արտաքին կապերի և միջազգայնացման գծով պրոռեկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՏՏ ամբիոն)
2. «Նախագծի թիմի կառավարում և հաղորդակցում» (Գ.Ավետիսյան, PMP, Լրացուցիչ կրթության և կարիերայի զարգացման դեպարտամենտի պետ, Կառավարման ամիոն)
3. «Իրադարձության կառուցվածքի փոխաբերությունը և դրա կիրառումը քաղաքական դիսկուրսի վերլուծության մեջ» (Ս.Հակոբյան, Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչ, լեզվաբանական գիտությունների թեկնածու, ՕԼԳ ամբիոն)
4. «Հետամնաց հասարակության քաղաքային ճգնաժամի բնույթն ու ապագան» (Հ.Փիլոսյան, Ճարտարապետության և դիզայնի ամբիոնի դասախոս):
5. «Շենքերի տեղեկատվական մոդելավորում ալգորիթմներով (BIM)» (Մ.Անդրիասյան Ճարտարապետության և դիզայնի ամբիոնի դասախոս, ասպիրանտ)
Միջոցառման բացման արարողության ժամանակ, մեր մասնակիցները ներկայացրեցին նաև Եվրոպական համալսարանը, և «Ցանցային սրճարան» միջոցառման ժամանակ նրանք մտքեր փոխանակեցին համագործակցության հնարավորությունների վերաբերյալ:
Բոլոր ներգրավված դասախոսներին միջոցառման ավարտին տրվեցին հավաստագրեր:

from our University actively participated delivering lectures:
1. “Mechatronic Systems in Manufacturing” (V.Soghomonyan, the Vice-Rector for External Relations and Internationalization, PhD in Technical Sciences, Associate Professor, IT Chair)
2. “Project Team Management and Communication” (G.Avetisyan, the Head of Supplementary Education and Career Development Department, PMP, Management Chair)
3. “Event Structure Metaphor and its Implementation in Political Discourse Analyses” (S.Hakobyan, the Head of Foreign Languages and Literature Chair, PhD in Linqistics, FLL Chair)
4. “The Nature and Future of Urban Crisis of a Backward Society” (H.Pilosyan, the Lecturer of Architecture and Design Chair)
5. “Algorithm-Aided BIM” (M.Andreasyan, the Lecturer of Architecture and Design Chair, postgraduate student)
Besides, they have presented our University during the Opening Ceremony of Virtual Global Faculty week 2021 and during the Networking Café Event they had exchange of thoughts concerning cooperation possibilities
All involved professors of the event were awarded Certificates for held lectures.

*Հաշվետու տարում Եվրոպական համալսարանի կողմից կազմակերպվել են մի շարք գիտաժողովներ, որոնք պայմանավորված են երկրի առջև ծառացած խնդիրների լուծման նպատակով գիտական լուծումներ գտնել:*

*In the reporting year, the European University organized a number of conferences with the aim of finding scientific solutions to the problems facing the country.*

### ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՂՎԵՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ՀԱՅԱՍՏԱՆԸ COVID-19-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ» ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ:

Գիտական աշխատաժողովին մասնակցեցին տնտեսագիտության, կառավարման, իրավագիտության, միջազգային հարաբերությունների, պատմության, հոգեբանության ոլորտի գիտության դոկտորներ, թեկնածուներ, հետազոտողներ: Աշխատաժողովի բացմանը ռեկտոր Հեղինե Բիշարյանը նշեց, որ գիտությունը և կրթությունը այն հզոր զենքն են, որով կարելի է կռվել, հաղթել ու զոհեր չունենալ:

Եվրոպական համալսարանը հատկապես պատերազմական օրերին փորձեց նյութական, հոգևոր, սոցիալական աջակցություն ցուցաբերել Արցախին, ինչպես նաև օգտագործելով մեզ համար հասանելի արտասահմանյան հարթակներում, մասնավորապես EURASHE-ի մեր բոլոր գործընկերներին տեղեկատվական նյութեր ուղարկել Ադրբեջանի ագրեսիայի, պատերազմական գործողություններ հրահրելու, վահաբեկիչներին պատերազմում օգտագործելու, Հայաստանի և Արցախի ինքնապաշտ-

### ON THE INITIATIVE OF THE EUROPEAN UNIVERSITY, “ARMENIA UNDER COVID-19 AND AFTER THE ARTSAKH WAR” SCIENTIFIC WORKSHOP WAS HELD IN AGHVERAN.

Doctors, PhD-s, researchers in the fields of economics, management, law, international relations, history, and psychology took part in the scientific workshop. At the opening of the workshop, Rector Heghine Bisharyan noted that science and education were the powerful weapons with which one can fight, win and have no victims. Firstly the epidemic took away hundreds, thousands of our compatriots, paralyzed the economy, left people without jobs, unfortunately the state and the economy could not respond quickly to the challenges and we had both human losses and economic downturn, reduced business activity, education, health, industry, tourism, art, all spheres.

2020 was not limited to epidemy and, unfortunately the most difficult event in the modern history of the Armenian people began on September 27- the Second Artsakh War.

The war took away thousands of enlightened young people

պանության և աշխարհի արձագանքի վերաբերյալ, ինչը մեծ արձագանք ստացավ մեր գործընկերների կողմից և մեծ դեր ունեցավ եվրոպական երկրներում ճիշտ և օբյեկտիվ տեղեկատվության հասանելության գործում:
Հայ ազգը ավելի դժվար փորձություններ է հաղթահարել, հիմա էլ պետք է կարողանանք գտնել իրավիճակից հնարավորինս քիչ վնասներով դուրս գալու ելքեր, իսկ այդ ուժը գիտության, կրթության և ազգային արժեքներով դաստիարակված հասարակություն ձևավորելու մեջ է:
Շատ մտավորականներ, քաղաքական գործիչներ իրենց գնահատականները և լուծման ուղիները առաջարկում են. Եվրոպական համալսարանը նախաձեռնեց այս գիտական աշխատաժողովը մեր մտավոր և գիտական ներուժը ներդնելու երկրի առջև ծառացած խնդիրների վերլուծության, գնահատման և, իհարկե, լուծումներ առաջադրելու համար:
Գիտական աշխատաժողովում վերհանված խնդիրները, վելուծությունները, արդյունքները ոչ միայն գիտական այն նաև գործնական բնույթ ունեն, ուստի կհրապարակվեն և կտրամադրվեն համապատասխան ոլորտների պատասխանատուներին:

entering new life, our relatives, students, took away from us a sacred land, a part of the homeland that was of the highest value, took away churches, hundreds of historical and cultural monuments, the country and the people were worn out both materially and spiritually. The European University, especially during the war days, tried to provide material, spiritual and social support to Artsakh, as well as using information platforms available to us abroad. In particular, we sent information materials to all our EURASHE partners on Azerbaijan's aggression, incitement to war, use of terrorists in war, self-defense of Armenia and Artsakh, and the world response, which received a great response from our partners and played an important role in providing accurate and objective information in European countries. The Armenian people have gone through more difficult trials, and now we must find a way out of the situation with minimum losses, and this strength lies in the formation of a society brought up in science, education and national values.
Many intellectuals and politicians offer their assessments and solutions. The European University initiated this scientific workshop to use our intellectual and scientific potential to analyze, evaluate and, of course, propose solutions to the problems facing the country.
The issues, analyses and results identified in the scientific workshop are not only scientific but also practical, so they will be published and provided to those responsible for the relevant fields.









## ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ՄԻՋՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Մարտի 26-ին Եվրոպական համալսարանի նախաձեռնությամբ կայացավ «Անվտանգության արդի հիմնախնդիրները» խորագրով գիտաժողով, որը մի հարկի տակ էր համախմբել գիտական և ակադեմիական հանրույթի շուրջ հարյուր մասնակիցների: Գիտաժողովի նպատակն էր քննարկել և վերհանել անվտանգային համակարգի բազմաշերտ խնդիրներ և դրանց տալ գիտական եզրահանգումներ և մեկնաբանություններ:

Գիտաժողովի բացման խոսքով հանդես եկավ ԵՀ ռեկտոր Հեղինե Բիշարյանը, ով ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ընդգծեց, որ Եվրոպական համալսարանը ունենալով բարձր գիտական և հետազոտական ներուժ, տնտեսության տարբեր ոլորտներում ներգրավված պրակտիկ մասնագետներ, փորձելու է այս գիտաժողովի

## A CONFERENCE “CURRENT ISSUES OF SECURITY” AT THE EU

On March 26, on the initiative of the European University, a conference entitled "Current Issues of Security" was held bringing together about a hundred participants from the scientific and academic community.

The aim of the conference was to discuss and reveal multi-layered problems of the security system and prrovide scientific conclusions and comments.

Welcoming the participants of the conference, the Rector Heghine Bisharyan emphasized that the European University, having a high scientific-research potential, practical specialists involved in different spheres of economy, will try to give scientific assessments and approaches to the issue of security. "Initially, when we have been planning the conference, it has been clear that our country is in a critical situation, there are

շրջանակներում անվտանգության հիմնահարցին տալ գիտական գնահատականներ և մոտեցումներ:
«Նախնական շրջանում, երբ պլանավորում էինք գիտաժողովը և նախագծում ուղղությունները, պարզ դարձավ, որ մեր երկիրը գտնվում է բախտորոշ իրավիճակում, անվտանգության խնդիրներ կան երկրի բոլոր ոլորտներում սկսած տնտեսությունից, քաղաքականությունից, առողջապահությունից, կրթությունից, մշակույթից, քաղաքաշինությունից և ճարտարապետությունից, վերջացրած տեղեկատվական, սոցիալ մեդիա անվտանգությունից»-նշեց ԵՀ ռեկտորը, ինչպես նաև անդրադարձավ նշված ոլորտներում առկա անվտանգային արդի խնդիրներին:
Մասնակիցները բարձր գնահատեցին բուհի նախաձեռնողականությունը երկրի համար դժվար ժամանակներում համակարգային մոտեցում ցուցաբերելուն այնպիսի կարևոր հարցի շուրջ, ինչպիսին անվտանգությունն է:
Նշենք, որ գրեթե 20 տարի առաջ Հայաստանի կառավարությունը եվրոպական երկրների մի շարք հեղինակավոր բուհերի հետ համատեղ հիմնադրեց Եվրոպական համալսարանը, որը այսօր հավակնում է դառնալ Հայաստանյան առաջատար բուհերից մեկը:

security issues in all spheres of the country, starting from economy, politics, health, education, culture, urban planning, architecture, to information and social media", said the EU Rector. She also touched upon the current security issues in the above-mentioned spheres.
Մարտ-սեպտեմբեր ամիսներին իրականցվող առցանց դասընթացից և գործնական պարապմունքներից հետո նրանք կմասնակցեն 2021թ.-ի աշնանը Մոլդովայի Հանրապետության Քիշնև քաղաքում անցկացվող սեմինարին:

### 3.2.13 “ERASMUS +” “CULTURAL CHANGE MAKERS” PROJECT

Linguistics program students Gurgen Petrosyan and Nelly Ghevondyan have passed the pre-election stage and will participate in the Erasmus + Cultural Change Makers project. The goal of the project is to prepare young leaders who can strengthen human rights for youth with an emphasis on cultural diversity, who will actively participate using informal methodology and inter-community cooperation.

After the online training and practical training in March-September months, they will participate in the seminar to be held in Chisinau, Republic of Moldova in the fall of 2021.

NYENRODE BUSINESS UNIVERSITEIT




### 3.2.14 «PERSPEKTYWY WOMEN IN TECH SUMMIT» ՎԵԲԻՆԱՐ

Սույն թվականի նոյեմբերի 3-ին կայացավ «Perspektywy Women in Tech Summit» գիտաժողովի «Տեղեկատվական օր» առցանց հանդիպումը: Ընդհանուր տեղեկատվությունից հետո խոսեցին նաև նախորդ տարիներին ընտրված հայտատուներից մի քանիսը:
Եվրոպական համալսարանից մասնակցեցին SS ֆակուլտետի դեկան Հեղինե Ղումաշյանը, Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր ամբիոնի ուսումնական գործընթացների կառավարիչ Անուշ Մելիքյանը և 8 ուսանողներ:
Որպես հիշեցում նշենք, որ կրթական հաստատությունների փակ լինելու պատճառով, ԵՀ Արտաքին կապերի և միջազգայնացման գծով պրոռեկտոր Վ.Սողոմոնյանը Երևան ժամանած լեհական «Perspektywy» կրթական հիմնադրամի պատվիրակության հետ հանդիպումը կազմակերպեց արտակարգ պայմաններում: Ըստ ձեռք բերված պայմանավորվածության՝ ԵՀ-ից տեխնոլոգիական ոլորտը ներկայացնող մի քանի կանայք (աղջիկներ) պետք է մեկնեին Լեհաստան մասնակցելու տարեկան գիտաժողովին:

### 3.2.14 “PERSPEKTYWY WOMEN IN TECH SUMMIT” WEBINAR

On November 3, 2020 there was held «Perspektywy Women in Tech Summit»’s “Information day” online meeting. After the general information, some of the applicants selected in previous years also spoke.
Heghine Ghumashyan, the Dean of the Faculty of IT, Anush Melikyan, the manager of Educational process of Microelectronics Circuits and Systems Chair and 8 students from the European University participated in the meeting.
As a reminder, due to the closure of educational institutions, V.Soghomonyan, the Vice-Rector for External Relations and Internationalization of the EUA, in extraordinary conditions organized a meeting with the delegation of the Polish “Perspektywy” educational foundation which arrived in Yerevan. According to the reached agreement, several women (girls), representing the field of technology in the EUA, should have left for Poland to participate in the annual summit. The pandemic changed the format of the conference. It will not take place in

Պանդեմիայի պատճառով գիտաժողովի անցկացման ձևաչափը փոխվեց: Այն չի կայանալու Լեհաստանում, այլ կայացավ առցանց 2020թվականի դեկտեմբերի 8-9-ը:






## 3.2.15 X-ՐԴ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Սույն թվականի հոկտեմբերի 27-ին կայացավ միջազգային մասնակցությամբ «Երիտասարդություն և Պետություն. Ժամանակակից կրթության զարգացման գիտական և մեթոդաբանական, սոցիալ-մանկավարժական և հոգեբանական ասպեկտներ» վերնագրով X-րդ Համառուսական գիտագործնական կոնֆերանս: Պանդեմիայի և պատերազմանական իրավիճակից ելնելով այն անցկացվեց առցանց: Մասնակիցները շատ չէին: Ռուսաստանի Տվերի պետական համալսարանի հետ համատեղ ԵՀ-ի հոգեբանության ամբիոնի վարիչ, գիտությունների թեկնածու, դոցենտ Կ.Նալչաջյանին շնորհվեց սերտիֆիկատ, ներկայացված հոդվածի և մասնակցության համար:

Poland, but will be online on December 8-9, 2020.






## 3.2.15 X ALL-RUSSIAN SCIENTIFIC AND PRACTICAL CONFERENCE

On October 27, 2020 with international participation there was held X All-Russian scientific and practical conference titled “Youth and the State: scientific-methodological, socio-pedagogical and psychological aspects of the development of modern education”. Due to pandemic and war situation, it was conducted online. There were few participants. Together with the Tver State University of Russia, the head of the Department of Psychology of EUA, Candidate of Sciences, and Associate Professor K.Nalchajyan was awarded the certificate for presented article and participation at the conference.

## ՆՊԱՏԱԿ 4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

## GOAL 4. IMPROVEMENT OF THE QUALITY ASSURANCE SYSTEM




Հաշվետու տարում որակի ներքին ապահովման գործընթացներն իրականացվել են ԵՀ 2018-2022 զարգացման ռազմավարական ծրագրին, ԵՀ որակի ներքին ապահովման ռազմավարությանը, Որակի ապահովման դեպարտամենտի տարեկան աշխատանքային ծրագրին և այլ ներքին նորմատիվային, իրավական փաստաթղթերին համապատասխան:

Իրականացված գործողությունները և վերոնշյալ ռազմավարությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնենք ըստ առանձին բաժինների:

In the reporting year, internal quality assurance processes were implemented in accordance with the EU 2018-2022 Development Strategic Plan, the EU Internal Quality Assurance Strategy, the annual work plan of the Quality Assurance Department and other internal legal documents.

Conducted actions and the report on the implementation of the above-mentioned strategies are presented in separate sections.

Համալսարանը 2020թ. շարունակեց Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը, որը մեկնարկել էր *2019թ.-ի նոյեմբերի 1-ից*:

Բուհում ռեկտորի գլխավորությամբ ձևավորված որակի ապահովման փորձագիտական աշխատանքային խումբը *2020թ. հունվարի 31-ին* Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն /ՈԱԱԿ/ ներկայացրեց Եվրոպական համալսարանի Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, որը պատրաստվել է ՈԱԱԿ-ի սահմանած 10 չափանիշներին համապատասխան՝ ընդգրկելով Համալսարանի առաքելության ու նպատակների, կառավարման և վարչարարության, ՄԿԾ-երի, ուսանողների և ՊԴ կազմի, գիտական ու հետազոտական գործունեության, ենթակառուցվածքների ու ռեսուրսների, արտաքին կապերի ու միջազգայնացման, որակի ներքին ապահովման տիրույթների ուղղությամբ վերլուծությունները, բուհի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների բացահայտումն ու դրանց լուծմանն ուղղված հետագա քայլերը:

ՈԱԱԿ փորձագիտական խմբի և ԵՀ ներքին ու արտաքին շահառուների հետ հանդիպումներն իրականացվեցին *2020թ. նոյեմբերի 2-7-ը* ընկած ժամանակահատվածում: Երկրում տիրող արտակարգ և

In 2020 the University continued the institutional accreditation process, which had started on November 1, 2019.

On January 31, 2020 the quality assurance expert working group headed by the Rector of the University submitted the EU self-assessment report to the National Center for Professional Education Quality Assurance (ANQA). The report was prepared in accordance with the 10 criteria set by ANQA, including analysis in the areas of the University's mission and goals, management and administration, educational programs, students and academic staff, scientific and research activities, infrastructure and resources, external relations and internationalization, internal quality assurance, identification of the university’s strengths and weaknesses, opportunities and threats as well as further steps to their solution.

The meetings with the ANQA expert panel and EU internal and external stakeholders were held on November 2-7, 2020.

In the conditions of the emergency and military situation in the country (because of COVID-19 and Artsakh War 2) QA Department was able to ensure the presence of the stakeholders at the meetings, the submission of the required documents to the experts, the technical assurance for the smooth organization of the accreditation process.

The draft report of the ANQA’s expert panel was presented to the University on January 15, 2021. The final report, prepared

ռազմական իրավիճակի պայմաններում /կապված Կորոնավիրուսային հիվանդության և Արցախյան 2-րդ պատերազմի հետ/ Դեպարտամենտը կարողացավ ապահովել շահառուների ներկայությունը հանդիպումներին, պահանջվող փաստաթղթերի ներկայացումը փորձագետներին, տեխնիկական ապահովվածությունը հավատարմագրման գործընթացն անխափան կազմակերպելու համար:

*2021թ. հունվարի 15-ին* բուհին ներկայացվեց ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբի նախնական զեկույցը: ՈԱԱԿ-ին ներկայացրած գրավոր անհամաձայնությունների և բանավոր առցանց քննարկման արդյունքում կազմված վերջնական զեկույցը բուհին ներկայացվեց *2021թ. փետրվարի 24-ին:*

Վերջնական զեկույցում փորձագետների դիտողությունների և խորհրդատվությունների, ինչպես նաև բուհի շահառուների հետ քննարկումների արդյունքների հիման վրա որակի ապահովման աշխատանքային խումբը ԵՀ որակի ապահովման դեպարտամենտի ղեկավարի գլխավորությամբ մեկամսյա ժամկետում մշակեցին և *2021թ. ապրիլի 2-ին* ՈԱԱԿ ներկայացրեցին 2021-2023թթ. «ԵՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բարելավման ծրագիրը», որտեղ ներկայացված էին թերությունների վերացմանն ուղղված հստակ գործողությունները, ակնկալվող արդյունքները, իրականացման ժամկետները,

as a result of written disagreements and online discussion submitted to ANQA, presented to the University on February 24, 2021.

Based on the comments and recommendations of the experts in the final report, as well as the results of the discussions with the stakeholders of the University, the quality assurance working group led by the head of the EU Quality assurance department developed and submitted to ANQA EU Improvement Plan for 2021-2023. Specific actions to eliminate deficiencies, expected outcomes, implementation deadlines, responsible departments, controlling and evaluation mechanisms were presented in the Improvement Plan.

պատասխանատու ստորաբաժանումները, վերահսկման և գնահատման մեխանիզմները:


ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ
ՎԿԱՅԱԿԱՆ № 51
«Եվրոպական համալսարան» հիմնադրամին
Հավատարմագրման հանձնաժողովի
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ

Ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի և բարելավման ծրագրի ուսումնասիրության, ինչպես նաև բուհի ղեկավարների հետ հանդիպման արդյունքում ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հավատարմագրման հանձնաժողովը *2021թ. հուլիսի 24-ին* Եվրոպական համալսարանին շնորհեց 4 տարի ժամկետով ինստիտուցիոնալ հավատարմագրում:

As a result of the study of the EU self-assessment, the expert panel report and the Improvement Plan along with the meeting with the managers of the University, the Accreditation Commission of the National Center for Professional Education Quality Assurance granted an institutional accreditation for a period of 4 years on July 24, 2021.

## *Կարիքների վերհանում/ Needs Identification*

Բուհի խնդիրների, ԵՀ շահառուների կարիքների վերհանման և բուհում իրականացվող գործընթացների շարունակական բարելավման նպատակով կազմակերպվել են մի շարք հարցումներ: *2020թ. նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 10-ն անցկացվել է հարցում* ԵՀ ընդունվածների շրջանում, որի նպատակն էր պարզել նրանց բավարարվածությունն ընդունելության գործընթացից և հասկանալու արդարացվել են արդյոք նրանց սպասումները բուհից: 2020թ.-ին բուհ ընդունվածների հարցումներն իրականացվել են առցանց: Հարցումների արդյունքները

To identify the problems of the University and the needs of its stakeholders, a number of surveys were conducted. From November 15 to December 10, 2020 a survey was conducted among EU applicants to find out their satisfaction with the admission process and to realize if their expectations from the University were met. In 2020 the surveys were conducted online. The results of the surveys showed that 95% of the students, taking part in the survey, were satisfied with the process of organizing and implementing the admission, and their expectations from the University were justified.

ցույց տվեցին, որ հարցման մասնակցած ուսանողների 95%-ը բավարարված է ընդունելության կազմակերպման և իրականացման գործընթացից և բուհից իրենց սպասումները արդարացված են:

2020-2021 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են հարցումներ նաև ՊԴ կազմի ու ուսանողների շրջանում, որոնց նպատակն է պարզել ՊԴ կազմից ուսանողների բավարարվածությունը, ինչպես նաև ԵՀ ռեսուրսներից և ստորաբաժանումների աշխատանքից ուսանողների և ՊԴ կազմի բավարարվածությունը: Հարցումների արդյունքները ներկայացվել են ԵՀ գիտական խորհրդին և բուհի շահառուներին հասանելի դարձնելու նպատակով: Հարցումների արդյունքներն առաջիկայում հրապարակվելու են նաև ԵՀ պաշտոնական կայքում:

During 2020-2021 academic year, surveys were also conducted among the academic staff and students, with the aim of finding out the satisfaction of the students from the academic staff, as well as the satisfaction of the students and academic staff from the EU resources and the services of the Units. The results of the surveys were submitted to the EU Scientific Council with the aim of making them available to the stakeholders of the University. The results of the surveys are going to be published on the official website of the EU soon.

## *Ատեստավորում/ Attestation*

*2021թ. հունիսին,* համաձայն ԵՀ գործող ՊԴ կազմի ատեստավորման կարգի, Դեպարտամենտի ղեկավարը, որպես ատեստավորման հանձնաժողովի անդամ, մասնակցել է ԵՀ ՊԴ կազմի ատեստավորմանը:

Ատեստավորման ընթացքում ներկայացվեցին ՊԴ կազմից ուսանողների բավարարվածության հարցումների արդյունքները, ինչը հանդիսանում է ՊԴ կազմի ատեստավորման չափանիշներից մեկը:

Ատեստավորման ընթացքում նաև վերհանվեցին ՊԴ

In June, 2021, as a member of the attestation commission, the Head of the Department participated in the attestation process of the EU academic staff in accordance with “The procedure for attestation of the EU academic staff”.

During the attestation the results of the students' satisfaction surveys from the academic staff were presented. It is one of the criteria for the attestation of the academic staff.

During the attestation, the needs related to education quality of the academic staff were also identified, that were

կազմի կրթության որակին առնչվող կարիքները, որոնք Դեպարտամենտի կողմից վերլուծվեց և ներկայացվեց ԵՀ ռեկտորին հետագա բարելավման համար:

analyzed by the Department and presented to EU Rector for further improvement.

## *Վերապատրաստումներ/ Trainings*

ԵՀ ՊԴ կազմի տարեկան ատեստավորման ընթացքում կարիքների վերհանման արդյունքում Դեպարտամենտի նախաձեռնությամբ ԵՀ ՊԴ կազմի համար ***2021թ. օգոստոս-սեպտեմբեր*** ամիսներին իրականացվեցին վերապատրաստումներ՝ «Հետազոտության մեթոդներ» թեմայով, որը վարում էր Եվրոպական համալսարանի Կառավարման ամբիոնի դոկտորանտ, ԵՀ Կառավարման ամբիոնի դասախոս, տնտ. թեկնածու, դոցենտ Արամ Մխիթարյանը: Վերապատրաստումները նաև միտված էին հավատարմագրման շրջանակներում ԵՀ-ի անբավարար գնահատված տիրույթի (Հետազոտություն և Զարգացում) բարելավմանը և ԵՀ ՊԴ կազմի նախապատրաստմանը համանուն դասընթացը դասավանդելուն, ինչը ներդրվել է 2021-2022 ուսումնական տարում:

Վերապատրաստումների ավարտին մասնակիցներին շնորհվեցին մասնակցության վկայականներ:
Դասընթացից մասնակիցների բավարարվածության գնահատման արդյունքները ցույց տվեցին, որ վերապատրաստումներն արդարացրել են մասնակիցների սպասումները և նրանց 94%-ը պատրաստակամություն են

Based on the results of needs identification during the annual certification of the EU academic staff, on the initiative of the QA Department trainings entitled "Research Methods" were held in August-September, 2021. The trainings were conducted by Aram Mkhitaryan, PhD in Economics, Associate Professor, Lecturer at the Chair of Management, European University.

The trainings were also aimed at improving the EU's insufficiently evaluated area (Research and Development) in the context of accreditation and preparing the EU academic staff for teaching the subject of the same name, which was implemented at EU in 2021-2022 academic year.

At the end of the trainings, the participants were awarded participation certificates.

The results of the assessment of the participants' satisfaction from the trainings showed that the training met their expectations; 94% of the participants expressed their willingness to take part in such trainings in the future.

հայտնել հետագայում ևս մասնակցել նման դասընթացների:

## Մշտադիտարկումներ/ Monitorings

*2020թ. սեպտեմբերի 21-25-ն* ՈԱ դեպարտամենտն իրականացրել է մշտադիտարկումներ ԵՀ դեպարտամենտներում, դեկանատներում և ամբիոններում բուհում որակի մշակույթի հետագա զարգացման, ամրապնդման, առկա խնդիրների վերհանման և շարունակական բարելավման նպատակով: Մշտադիտարկման արդյունքում բացահայտվեցին, որ չնայած բուհում որակի մշակույթն ու քաղաքականությունը, հաշվետվողականության և գործընթացների պլանավորման սկզբունքները ինստիտուցիոնալ և իրավական տեսանկյունից ներդրված են, այնուամենայնիվ կրում են առավելապես ֆորմալ բնույթ և գործնականում լիարժեք չեն կիրառվում:

*2020թ. նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 5-ն* իրականացվել է ԵՀ մասնագիտությունների գծով վարձավճարների մշտադիտարկում, որի արդյունքների վերլուծության հիման վրա առաջարկվեց վերանայել Երևանի և մասնաճյուղերի վարձավճարները:

*2021թ. մայիսին* իրականացվել է ԵՀ ամփոփիչ ատեստավորման գործընթացի մշտադիտարկում, որի նպատակն էր բացահայտել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման և

From September 21 to 25, 2020, the QA Department carried out monitoring in the EU departments, dean's offices and chairs to further develop and strengthen the quality culture at the University, to identify existing problems and to continuously improve them.

The results of the monitoring revealed that though the quality culture and policy, the principles of accountability and the planning of processes are implemented at the University from the institutional and legal perspectives, they are mostly formal and are not fully practically applied.

From November 25 to December 5, 2020, the tuition fees for EU specialties were monitored. Based on the analysis of the results it was suggested to review the tuition fees of Yerevan and branches.

The monitoring of the final attestation process was carried out in May 2012, with the aim of revealing the relevance of the preparation of the final work, Master's theses and defense processes in compliance with the requirements of regulations on “Final attestation, preparation, defense, evaluation, appeal of the EU master's thesis” (approved on August 30, 2021, Session No. 9) and “Final attestation, preparation, defense, evaluation, appeal of the EU Bachelor’s work” (approved on October 24, 2021,

պաշտպանության գործընթացների համապատասխանությունը ԵՀ Գիտխորհրդի 2019թ հունիսի 6-ի թիվ 9 նիստում հաստատած «ԵՀ մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման, մագիստրոսական թեզի պատրաստման, պաշտպանության, գնահատման և բողոքարկման» և 2019թ հոկտեմբերի 24-ի թիվ 11 նիստում հաստատված «ԵՀ բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման, ավարտական աշխատանքի պատրաստման, պաշտպանության, գնահատման և բողոքարկման» կարգերի պահանջներին: Մշտադիտարկման արդյունքները ԵՀ որակի ապահովման դեպարտամենտի ղեկավարի կողմից ներկայացվել են ԵՀ գիտխորհրդի նիստում:

Session No. 11). The results of the monitoring were presented to the EU Scientific Council by the Head of the Quality Assurance Department.

## *Այլ իրադարձություններ/ Other events*

Դեպարտամենտի աշխատակիցները պարբերաբար մասնակցել են կրթության որակի ապահովման ոլորտին առնչվող տարաբնույթ միջոցառումներին՝ աշխատաժողովներին, վերապատրաստումներին, կոնֆերանսներին, որոնք հիմնականում կազմակերպվել են առցանց, մասնավորապես.

- ԵՀ-ում շարժունությանը նպաստելու և ամբիոնների հետ կապն առավել ամրապնդելու նպատակով **2020-2021 ուսումնական տարում** Որակի ապահովման դեպարտամենտի

The staff of the Department regularly participated in various events related to the education quality assurance such as workshops, trainings, conferences. The events were mainly organized online, particularly:

- to further strengthen the connection with the chairs and to promote mobility at the EU **in 2020-2021 academic year**, K. Sargsyan, the Head of the Quality Assurance Department, participated in the processes of the benchmarking of EU educational programs and needs identification of EU stakeholders. As a result mobility windows were included

ղեկավար Կ. Սարգսյանը մասնակցել է ամբիոններում ՄԿԾ-ների բենչմարքինգի և շահառուների կարքիների վերհանման գործընթացներին, որի արդյունքում ուսումնական պլաններում ներառվել են շարժունության պատուհաններ:

- *2020թ. դեկտեմբերի 17-18-ը* Դեպարտամենտի ղեկավար Կարինե Սարգսյանը ԵՀ այլ դեպարտամենտների ղեկավարների և աշխատակիցների հետ միասին մասնակցել է «PEARSON-ի և օտար լեզուների միջազգային թեստավորման և վերապատրաստումների դեպարտամենտ»-ի նախաձեռնությամբ «DATA BRIDGE MARKET RESEARCH – կրթության ոլորտի շուկայական հետազոտություններ» թեմայով կոնֆերանսին, որտեղ քննարկվեցին կրթության կազմակերպման, կրթության կառավարման, շարունակական կրթության առաջնահերթությունները:
- *2020թ. դեկտեմբերի 17-ին* Դեպարտամենտի ղեկավար Կարինե Սարգսյանը մասնակցել է ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպված «Ուսուցման և ուսումնառության արդյունավետ մեթոդներ» թեմայով առցանց դասընթացին:
- *2020թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին* Որակի ապահովման դեպարտամենտը քննարկումներ է իրականացրել ԵՀ բոլոր

in the curricula.

- On December 17-18, 2020, Head of the Department Karine Sargsyan, together with the Heads and employees of other Departments, participated in a conference entitled "DATA BRIDGE MARKET RESEARCH" initiated by PEARSON and Foreign Language Testing and Training Department. The priorities of education organization, education management, lifelong learning were discussed during the conference.
- On December 17, 2020, Karine Sargsyan, a Head of the Department, participated in the online training entitled "Effective Teaching and Learning Methods" organized by ANQA.
- In October-December, 2020 within the framework of the chair meetings the Quality Assurance Department held discussions with the lecturers of all chairs in the context of implementation of the EU educational guidelines.
- In 2020-2021 academic year, with the participation of the Quality Assurance Department, the following documents were developed, reviewed and submitted for approval:

1. Regulation on the development, approval, monitoring, evaluation and review of the educational program (approved on April 29, 2021, No. 24 session);
2. Regulations for admission to the full-time and part-time studies of the EU Bachelor's Degree for 2021-2022 academic year (approved on 02.04.2021, 26th session);
3. Regulations for admission to the full-time and part-time

ամբիոնների դասախոսների հետ՝ ամբիոնների նիստերի շրջանակներում, ԵՀ կրթական ուղենիշերի կիրառման համատեքստում

- *2020-2021 ուսումնական տարում* Որակի ապահովման դեպարտամենտի մասնակցությամբ մշակվել, վերանայվել և հաստատման են ներկայացվել հետևյալ փաստաթղթերը՝
  1. Մասնագիտության կրթական ծրագրի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման կանոնակարգ (հաստատված 29.04.2021թ, թիվ 24 նիստ),
  2. ԵՀ բակալավրի առկա և հեռակա ուսուցման 2021-2022 ուստարվա ընդունելության կանոնակարգեր (հաստատված 02.04.2021թ, թիվ 26 նիստ),
  3. ԵՀ մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2021-2022 ուստարվա ընդունելության կանոնակարգեր (հաստատված 02.04.2021թ, թիվ 26 նիստ),
  4. ԵՀ բենչմարքինգի իրականացման քաղաքականություն (հաստատված 30.08.2021թ, թիվ 28 նիստ),
  5. ԵՀ-ում բենչմարքինգի իրականացման ընթացակարգ (հաստատված 30.08.2021թ, թիվ 28 նիստ)։

studies of the EU Master's Degree for 2021-2022 academic year (approved on 02.04.2021, 26th session);

4. EU Benchmarking Implementation Policy (approved on




30.08.2021, Session No. 28);

5. Benchmarking implementation procedure in the EU (approved on 30.08.2021, Session No. 28).

## ՆՊԱՏԱԿ 5. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԵՀ 2018-2022թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գերակա ուղղություններից մեկն է ԵՀ մասնաճյուղերի զարգացումը, որի ուղղությամբ 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել է մասնաճյուղերի նյութատեխնիկյայական բազայի և ռեսուրսների համալրում ու բարելավում՝ կրթության որակի, դասավանդման և ուսումնառության մեթոդների բարելավման և ՄԿԾ-ների իրականացման համար:

Նախորդ տարում Եվրոպական համալսարանը վերաբացեց Կապանում գործող մասնաճյուղը, որի գործունեությունն ապահովելու համար իրականացրեց կապիտալ վերանորոգում. ձեռք բերվեց անհրաժեշտ գույք և կահավորանք, ձևավորվեց համակարգչային լսարան:

ԵՀ բոլոր մասնաճյուղերը կապիտալ վերանորոգված են, ապահովված են էլեկտրոնային գրադարաններով և համակարգչային լսարաններով:

ԵՀ մասնաճյուղերում դասավանդման որակի գնահատման նպատակով իրականացվել է պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան ատեստավորում, ինչը նաև կարիքների վերհանման և շարունակական բարելավման նպատակ ունի:

Որակի բարելավման նպատակով ԵՀ Վանաձորի, Գյումրու Իջևանի մասնաճյուղերում նշանակվել են որակի ապահովման պատասխանատուներ, ովքեր հաշվետու

## GOAL 5. BRANCH DEVELOPMENT

One of the priorities of the EUA 2018-2022 Development Strategic Plan is the development of EUA branches, during which the material and technical base and resources of the branches were replenished and improved during 2020-2021 academic year to improve the quality of education, teaching and learning methods and the implementation of Academic programs.

Last year, the European University reopened its branch in Kapan, which was overhauled to ensure its operation. Necessary property and furniture were acquired, a computer classroom was set up.

All EUA branches are fully renovated, equipped with electronic libraries and computer classrooms.

Annual attestation of the teaching staff has been carried out in order to assess the quality of teaching in the EUA branches, which also aims to identify needs and continuously improve them.

In order to improve the quality, Quality assurance officers were appointed in the branches of Vanadzor, Gyumri, and Ijevan who conducted a number of surveys and analyses during the reporting year to identify problems and improve

տարվա ընթացքում իրականացրել են մի շարք հարցումներ և վերլուծություններ մասնաճյուղերում խնդիրների վերհանման և որակի բարելավման նպատակով:

the quality of the branches.

## *ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ / EVENTS*

ՀՀ արտակարգ իրավիճակների աշխատակցի օրվա կապակցությամբ Եվրոպական Համալսարանի Գյումրու մասնաճյուղում կազմակերպվեց «ԱԻՆ գործառույթները» թեմայով սեմինար-քննարկում,որի ընթացքում քննարկվեց ԱԻՆ ստեղծման պատմությունը, գործառույթները, նախարարության առջև դրված խնդիրները՝ ներկա համավարակային պայմաններում:

On the occasion of the RA Emergency Situations Worker's Day, a seminar-discussion on "Functions of the Ministry of Emergency Situations" was organized in the Gyumri branch of the European University, during which the history of the establishment of the Ministry of Emergency Situations, functions, tasks assigned to the Ministry were discussed.









Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղում, կազմակերպվեց սեմինար-իրազեկում,որի նպատակն էր ծանոթացնել առաջին կուրսեցիներին Moodle հեռավար ուսուցման համակարգին:



An introductory seminar was organized at the branch of the European University in Gyumri, the purpose of which was to familiarize freshmen with the Moodle distance learning system.

---



Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ուսանողները հարգանքի տուրք մատուցեցին մեր անմահ հերոսների հիշատակին:



Students of the Gyumri branch of the European University honored the memory of our immortal heroes.

---



Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի «Իրավագիտություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Քրիստինե Մարտիրոսյանը մասնակցել է «Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» ծրագրին:

Kristine Martirosyan, a 2nd year law student at the Gyumri branch of the European University, participated in the "Youth for Anti-Corruption" program.

---



Բեռլին ԱՐՏ հոթելում Եվրոպական Միության «ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության օժանդակությամբ կայացած «Nature & Adventure Village» նախագծի Արկածային զբոսավարների պատրաստման դասընթացին իրենց ակտիվ մասնակցությունը ունեցան Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի «Մշակութաբանություն» մասնագիտության 2-րդ և 4-րդ կուրսի ուսանողները՝ ստանալով «Արկածային զբոսավար»-ի հավաստագիր:



The 2nd and 4th year students of the "Culture" specialty of the Gyumri branch of the European University took an active part in the "Nature & Adventure Village" Adventurous guide training course project supported by the European Union "EU for Business" initiative which was held in Berlin ART Hotel and were awarded with "Adventurous Guide" Certificate.

---




Փետրվարի 27-ին ԵՀ Գյումրու մասնաճյուղում կազմակերպվել էր վերապատրաստում «Հակասթրես. Լավագույն մեթոդներ» թեմայով, որը վարել է  հոգեբան Հրաչյա Ամիրյանը:

On February 27, at the Gyumri branch of the EUA was organized a training "Anti-stress. Best Methods" by psychologist Hrachya Amiryan.

---



Հաշվետու տարում Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղում իրականացվեց ավանդական դարձած Օլիմպիադա-2021-ը, որը ունեցել է: 100-ից ավելի մասնակիցներ՝ բոլորը արժանի լավագույն խրախուսանքի:



This year the traditional Olympiad 2021 has been held at the Gyumri branch of the European University, which had more than 100 participants, all of whom deserve the best encouragement.

---

Մարտի 1-ը միջազգային հանրությունը նշում է Քաղաքացիական պաշտպանության համաշխարհային օր: Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղը և ՀՀ ԱԻՆ Շիրակի մարզային փրկարարական վարչությունը կազմակերպեցին սեմինար-քննարկում՝ կապված քաղաքացիական պաշտպանության անվտանգության հիմնախնդիրների հետ:

March 1 is the World Civil Defense Day.



The Gyumri branch of the European University and the Shirak Regional Rescue Department of the RA Ministry of Emergency Situations organized a seminar-discussion related to the issues of civil defense security.

---



Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետի մի խումբ ուսանողներ մասնակցեցին «Հակակոռուպցիոն դեսպաններ» դասընթացին:

A group of students from the Faculty of Law of the Gyumri Branch of the European University participated in the "Anti-Corruption Ambassadors" course.



Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ուսանողները՝ դասախոս Ն.Հարությունյանի ուղեկցությամբ մասնակցեցին Համայնքապետարանի նիստերի դահլիճում կայացած Ամերիկյան համալսարանի կողմից կազմակերպված «Զբոսաշրջության զարգացում»խորագրով սեմինար,որը վարեց լիբանանահայ Վարանդ Թոփալյանը:



The students of the Gyumri branch of the European University, accompanied by lecturer N. Harutyunyan, took part in a seminar entitled "Tourism Development" organized by the American University in the conference hall of the Municipality, chaired by Lebanese-Armenian Varand Topalyan

---



Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղը և «Միասին» հիմնադրամը կնքեցին համագործակցության հուշագիր, որի նպատակն է ապահովել երկու կազմակերպություններում կրթության որակի բարելավումը:

The Gyumri branch of the European University and the "Miasin" Foundation signed a memorandum of cooperation, which aims to ensure the improvement of the quality of education in both organizations.

---



Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի զբոսաշրջության բաժնի ուսանողների այցը «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան,որտեղ ոչ միայն ուսումնասիրեցին թանգարանային նմուշները,այլև իրենց գիտելիքները դրսևորեցին էքսկուրսավարի կողմից ներկայացվող էքսպոզիցիաների համատեքստում:



The students of the tourism department of the Gyumri branch of the European University visited the "Kumayri" historical-cultural reserve-museum, where they not only studied the museum specimens, but also showed their knowledge in the context of the expositions presented by the guide.

---

Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ուսանողուհի Անուշ Հովհաննիսյանը մասնակցեց Ֆրանսիայի Լիոնի Առևտրաարդյունաբերական Պալատի EKLYA բիզնես դպրոցի կողմից կազմակերպվող կարճաժամկետ առցանց դասընթացներին:



Anush Hovhannisyan, a student at the Gyumri branch of the European University, participated in a short-term online course organized by the EKLYA Business School of the Chamber of Commerce and Industry of Lyon, France.

---



Մասնաճյուղի հոգեբանության ամբիոնի դասախոս Անուշ Բաղրամյանի զեկույցով հանդես եկավ ԵՀ-ում կազմակերպված «Անվտանգության արդի հիմնախնդիրները» թեմայով միջհամալսարանական գիտաժողովին: Զեկույցի թեման՝ «Հոգեհիգիենան առողջապահության անվտանգության տեսանկյունից»:



Anush Baghramyan, a lecturer at the Department of Psychology at the branch, made a report at the inter-university conference on "Current Security Issues" organized in the EUA. The topic of the report was "Mental hygiene from the point of view of health security".



Հայտնի հոգեբան Դրանի Կալաջյանը «Հետտրավմատիկ աճ» թեմայով վարպետաց դաս անցկացրեց Եվրոպական համալսրանի Գյումրու մասնաճյուղում:

Well-known psychologist Drani Kalajyan conducted a master class on "Post-Traumatic Growth" at the Gyumri branch of the European University.

---

Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի մշակութաբանության ամբիոնի ուսանողները պարբերաբար իրականացնում են գործնական դասեր՝ հանդիսանալով որպես զիդ-զբոսավար՝այցելելով Գյումրու պատմամշակութային մի շարք վայրեր:

The students of the Chair of Culture of the Gyumri Branch of the European University regularly conduct practical lessons, being a guide they visit a number of historical and cultural places of Gyumri.



---



Եվրոպական համալսարանի Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսա-կան կազմը ակտիվորեն մասնակցում է ԵՀ-ի և ԵՀ գործընկերների կողմից կազ-մակերպվող գիտական միջոցառումներին, ներկայացնելով իրենց հետազոտությունների արդյունքները, այդ թվում տարածաշրջանային գործընկեր ԵՐԻջևանի պետական համալսարանի մասնագետների հետ համատեղ:



The teaching staff of the Ijevan branch of the European University actively participates in scientific events organized by the European University and its partners, presents the results of their research, including in cooperation with specialists from Ijevan State University, a regional partner.

Եվրոպական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի կողմից պայմանագրեր են կնքվել հետևյալ հաստատությունների հետ Վանաձորի Համայնքապետարան, Ստեփան Զորյանի անվան Տուն թանգարան, «Հյուրանոց Կիրովական»ՍՊԸ, Arm Travel Tours: Համաձայն պայմանագրի, համալսարանի ուսանողները հնարավորություն ունեն իրենց ուսումնաարտադրական պրակտիկան անցնել այնտեղ:

The Vanadzor branch of the European University has signed agreements with the following institutions: Vanadzor Municipality, Stepan Zoryan`s House Museum, "Kirovakan Hotel" LLC, Arm Travel Tours. According to the agreement, the university students have the opportunity to spend their internship there.





---




Եվրոպական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի մշակութաբանություն մասնագիտության ուսանողները ոչ միայն իրենց պրակտիկ գիտելիքները ստանում են գործնական միջավայրում, այլ նաև հնարավորություն ունեն դրանք գործնականում կիրառելու և զարգացնելու նաև մասնագիտական կարողություններ:



Students of the Vanadzor branch of the European University majoring in Culture not only gain their practical knowledge in a practical environment, but also have the opportunity to apply and develop their professional skills in practice.

---

ԵՀ Կապանի մասնաճյուղի "Հոգեբանություն" բաժնի ուսանողները մասնակցեցին Հոգեսոցիալական կարգավորման կենտրոն Կապանի մասնաճյուղի կողմից կազմակերպված "Կոգնիտիվ հոգեթերապիայի և արտ-թերապիայի տեխնիկաները տագնապի և վախերի հաղթահարման գործընթացում" թեմայով վերապատրաստմանը և ստացան վկայականներ:



The students of the "Psychology" department of the Kapan branch of the EUA participated in the training on "Cognitive psychotherapy and art-therapy techniques in the process of overcoming anxiety and fears" organized by the Kapan branch of the Psychosocial Center and they received certificates.

Ըստ կնքված պայմանագրերի, Եվրոպական համալսարանի Կապանի մասնաճյուղի ուսանողները հնարավորություն ունեն անցնելու իրենց ուսումնաարտադրական պրակտիկան հետևյալ հաստատություններում.

«Զանգեզուր Պրո» ՍՊԸ, «ԼԱՄԱՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ,

«ՊՈՐԿՊՐՈԴ» ՍՊԸ, «ԳՅՈՒՂԱՐՏ» ՓԲԸ,

«ՄԱՐԻԼԱ» ՍՊԸ,

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ,

ինչպես նաև հետևյալ փաստաբանական գրասենյակներում.

Արա Գրիգորյան ԱՁ, Ռուբեն Ղազարյան ԱՁ,

Հրայր Խաչատրյան ԱՁ,

Խալափյան Արշավիր ԱՁ:

Քննարկման գործընթացում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի Բնապահպանական բաժնի հետ պայմանագրի կնքումը:

According to the signed agreements, the students of the Kapan branch of the European University have the opportunity to pass their internship in the following institutions.

"Zangezur Pro" LLC,

"LAMAX GROUP" LLC,

"PORKPROD" LLC,

"GYUGHART" CJSC,

"MARILA" LLC,

"Kapan Medical Center" CJSC,

as well as in the following law offices:

Ara Grigoryan Private Entrepreneur,

Ruben Ghazaryan Private Entrepreneur,

Hrayr Khachatryan Private Entrepreneur,

Khalapyan Arshavir Private Entrepreneur.

The signing of a contract with the Department of Ecology of the Zangezur Copper-Molybdenum Combine is being discussed.

ՀՀ, ք.Երևան 0038, Լենինգրադյան 4ա
4a Leningradyan, Yerevan 0038, RA
Հեռ. +37410 399 855
www.gaudit.am , info@gaudit.am

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Եվրոպական Համալսարան»**
**հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին**

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Եվրոպական Համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվների փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը։

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

## Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան։ Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում։ Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների։ Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար։

## Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի

հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

**Հաստատված է**
«Ջի ընդ Քո. Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն/աուդիտոր Լ.Պողոսյան

Երևան
28 հունիսի 2021թ.